

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Ա. ԴԱՍԱՐԱՆ

ԵՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏ ԵՄ

**Ես հայ եմ: Զաւակն եմ Հայ
Առաքելական Եկեղեցւոյ:**



**Իմ նախահայրերուս հայրենիքը
կը կոչուի Հայաստան:**

**Հայաստան, Քրիստոնեայ
առաջին երկիրը եւ պետութիւնը եղած է:**

**Հայեր քրիստոնեայ ըլլալով, կը հաւատան արարիչ մէկ
Աստուծոյ, որ երկինքն ու երկիրը, տեսանելի եւ անտեսանելի,
չնչաւոր եւ անչունչ բոլոր արարածները ստեղծած է:**

**Աստուած մեր Հայրն է, որովհետեւ, Ան մեզի կեանք տուած
եւ ստեղծած է:**

**Արարիչ երկնաւոր Հայր Աստուծոյ հետ երբ ուզենք խօսիլ եւ
յարաբերիլ, մենք կ'աղօթենք:**

Քրիստոնեան օրուան ընթացքին յաճախ պէտք է աղօթէ:

Աղօթելով Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնենք, իր
տուած բոլոր բարիքներուն եւ մեզի շնորհած կեանքին համար:

Աստուծոյ կ'աղօթենք, երբ որեւէ բանի կարիք կամ
խնդրանք ունինք: Աստուծոյ կը դիմենք օգնութեան,
պահպանութեան եւ բազմաթիւ շնորհքներու համար:



ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԱԿԵՐՏԸ Կ'ԱՂՕԹԷ

Ամէն քրիստոնեայ պէտք է սորվի եւ գիտնայ աղօթել:

Գիտե՞ս, եւ կրնա՞ս մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Տէրունի աղօթք «Հայր Մեր»ը աղօթել:

-Այո՛, պիտի սորվիմ եւ յաճախ պիտի աղօթեմ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի իր աշակերտներուն սորվեցուցած Տէրունի աղօթք «Հայր Մեր»ը:


- Գիտե՞ս որ, ամէն աղօթք խաչակնքումով պէտք է սկսի եւ աւարտի: Գիտե՞ս խաչակնքել: Ինչպէ՞ս կը խաչակնքես:

Այո: Նախ աջ ձեռքիս բթամատը, ցուցամատը եւ միջնեմատը կը միացնեմ, կը փակեմ մատնեմատն ու ճկոյթ մատը ափիս մէջ: Ապա խաչակնքելու համար երեք մատներս կը տանիմ ճակատիս եւ կ'ըսեմ.

«Յանուն Հօր», յետոյ դէպի վար, կուրծքիս կեդրոնը տանելով կ'ըսեմ, «եւ Որդւոյ». իսկ ձախ յետոյ աջ ուսերուս տանելով կ'ըսեմ, «եւ Հոգւոյն Սրբոյ». ու վերջապէս ձեռքիս բոլոր մատները բանալով կը հանգչեցնեմ կուրծքիս վրայ եւ կ'ըսեմ. «Ամէն»:

- Տե՛ս խաչակնքելու ձեւը:

<p>1</p> 	<p>2</p> 	<p>3</p> 	<p>4</p> 	<p>5</p> 
<p>Յանուն Հօր</p>	<p>Եւ Որդւոյ</p>	<p>Եւ Հոգւոյն</p>	<p>Սրբոյ</p>	<p>Ամեն</p>



Այս իմ աջ ձեռքս է:

- Ո՞ր մատներս իրարու միացնելով կը խաչակնքեմ: Գրե՛ անունները:

- 1- _____
- 2- _____
- 3- _____




Տե՛ս մատներու ձեւը:

- Ուրիշ ե՞րբ եւ ո՞ւր կ'աղօթես:


Ես այսպէ՛ս կը խաչակնքեմ:




Յանուկն Հօր




Եւ Որդւոյ



Եւ Հողւոյն



Սրբոյ



Ամէն

Ամբողջացողը:

Երբ խաչակներեմ կ'ըսեմ.

«Յանունս _____

Եւ _____

Եւ _____

_____»:



Ամէնօրեայ Օգտակար Աղօթքներ:



Տէրունական աղօթք «Հայր Մեր»

Հայր մեր որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո:

Եւ եսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ

յերկրի: Զհաց մեր հանապազորդ, տո՛ւր մեզ այսօր:

**Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց
պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛**

զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք

յաւիտեանս, յաւիտենից: Ամէն:





ԱՌԱԿՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ



**«Տէ՛ր, եթէ իմ շրթունքներս բանաս՝ իմ բերանս
քու օրհնութիւնդ պիտի երգէ»:**

ԳՈՐԾԻ ՍԿՍԵԼԷ ԱՌԱՋ

**«Ձգործս ձեռաց մերոց ուղի՛ղ արա ի մեզ Տէր
եւ ըզգործս մտաց մերոց յաջողեա՛ մեզ Տէր. ամէն»:**

Աշխարհաբար

Մեր գործերը դո՛ւն ուղղէ, Տէ՛ր, մեր գործերը յաջողցո՛ւր: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 90.17

Կամ

**«Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն գբարիս
խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար
խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս.
եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս »:**



Աշխարհաբար

Դուն՝ Զօրը իմաստութիւնը՝ Յիսուս, իմաստութի՛ւն տուր ինձի՝ որ բարի բաներ խորհիմ, խօսիմ եւ գործեմ քու առջեւ՝ ամէն ժամ. չար խորհուրդներէ, խօսքերէ եւ գործերէ փրկե՛ զիս. եւ ողորմե՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս: Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ

ԿԷՍՕՐՈՒԱՆ ԱՂՕԹՔ

ՃԱՇԵԼԻ ԱՌԱՋ

*«Ճաշակեսցուք խաղաղուլթեամբ ըզկերակուրս
որ պատրաստեալ է մեզի Տեառնէ, օրհնեալ է,
Տէր ի պարգեւս իւր , ամէն»:*

Աշխարհաբար




Խաղաղութեամբ ճաշակենք Տիրոջնէն պարգեւուած կերակուրը:
Օրհնեալ է Տէրը իր պարգեւներովը: Ամէն:

ՃԱՇԵԼԻ ՅԵՏՈՅ

*«Փառք կերակրողին տիեզերաց, որ ըզմեզ կերակրեաց
եւ լիացոյց, նմա փառք յաւիտեանս. Ամէն»:*

Աշխարհաբար

Փառք տիեզերքը կերակրողին, որ մեզ կերակրեց ու կշտացուց:
Անոր յաւիտենապէս փառք: Ամէն:



Ո՛Վ ՄԵԾ ԱՍՏՈՒԱԾ

Ո՛վ մեծ Աստուած,

Մեզ տուած ես բարի հայր,

եւ գուրգուրացող մայր:

*Տո՛ւր մեզ շնորհք ընենք աղօթք,
Չրլլանք անհոգ, ապրինք խելօք,
Պարկեշտ ու հեզ ու սիրենք քեզ:*




ՅԻՍՈՒՍԻ ՏՈՒԱԾ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. ‘Սիրեցէ՛ք զիրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՛ դուք ալ զիրար սիրեցէ՛ք: Զեր իրար սիրելովն է որ մարդիկ պիտի գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք՝» (Յովհ.13:34-35):



ՔՆԱՆԱԼԷ ԱՌԱԶ



«Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս»:

Աշխարհարար



Դուն՝ որ բոլորին պահապանն ես, Քրիստոս, քու աջ թող հովանի՛ ըլլայ իմ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած ատենս թէ նամբան գացած ատենս, քնացած թէ արթնցած ատենս, որպէսզի երբե՛ք չսասանիմ. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՛ բազմամեղիս:

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԱՂՕԹՔՍ ՅԻՍՈՒՍԻ

Իմ աղօթքս է միշտ, ո՛վ Տէր Յիսուս, որ հսկես վրաս երբ կը
խաղամ: Պաշտպանես զիս ամէն չարիքէ եւ փորձանքէ:
Շնորհքներովդ զիս զարդարես եւ իմաստութիւն շնորհես,
սիրովդ աճեցնես, որպէսզի բարի կամքդ կատարեմ:
Օրհնէ՛ ընտանիքս, տո՛ւր հօրս եւ մօրս առողջութիւն,
գործերու յաջողութիւն եւ երկար կեանք:



ՏԷՐ ՅԻՍՈՒՍ

Տէր Յիսուս, կը խոստանամ Քեզի ամէն օր աւելի սիրել եւ
միշտ աղօթել:
Օգնէ՛ ինձի, որ օգնեմ ինձմէ տկարին ու կարօտեալին:
Շնորհէ՛ որ ըլլամ բարի, մաքրասէր եւ աշխատասէր.
չըլլամ չար, ծոյլ կամ անհնազանդ, այլ՝ ըլլամ միշտ խելօք,
պարկեշտ, ճշմարտախօս, հեզ եւ հնազանդ ու բարի օրինակ
բոլորին:



ՏԷՐ ԻՄ ԱՍՏՈՒԱԾ



«Տէր իմ Աստուած Տէր բարերար,
Դուն պահպանէ մեզ այս գիշեր,
Տուր հօրս ու մօրս երկար կեանք, եւ
Երջանիկ հանգիստ օրեր:
Քու սուրբ հրեշտակդ մեր մօտէն
Բնաւ չհեռանայ, այլ՝ փորձանքներէն
Մեզ միշտ պահէ ու առաջնորդէ, եւ
Իր պահպանութեամբ Առաւօտուն արթնցնէ»:



ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

«Տէ՛ր խաղաղութեան ճամբաներուն մէջ պահէ մեր քայլերը:
Տէ՛ր, ուղղէ եւ առաջնորդէ մեզ եւ բոլոր Քեզի
հաւատացողները, որպէսզի դէպի խաղաղութիւն
եւ յաւիտենական կեանք երթանք. Ամէն»:





ԱՂՕԹՔ

Ով Բարերար Հայր Երկնաւոր
 Դարձեալ ծուկի կու գամ այսօր,
 Տալու Քեզի փառք գոհութիւն
 Որ մեր կեանքը պահեցիր Դուն:



Օգնէ՛ որ միշտ ըլլամ բարի
 Ընկեր չըլլամ բնաւ չարի
 Նման մանուկ փոքր Յիսուսին
 Զարգանան իմ սիրտն ու հոգին:
 Իմ սիրելեաց տո՛ւր օրհնութիւն,
 Խնամէ՛ մեզ սիրովդ անհուն:
 Այս աղօթքս թող Քեզ հասնի՛
 Սուրբ անուսով Տէր Յիսուսի: Ամէն:



ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՂՕԹՔԸ

Ո՛վ երկնային, ով հրաշալի,
 Դուն մեր Աստուած, Հայր բարի:
 Տո՛ւր մեզի Տէր, շնորհք ու սէր,
 Իմաստութիւն եւ խնդութիւն:
 Շնորհէ՛ մեզի բարի սիրտ ու հոգի
 Քե՛զ ճանչնալու, Քեզ սիրելու:
 Միշտ հեռու պահէ մեզ փորձանքների
 Հոգա՛ ու խնամէ մեզ ամէն օր,
 Որ աղօթենք ու միշտ Քեզի պաշտենք
 Ամէն օր ու ամէն ժամ, յարածամ:



Ո՞Վ ՍՏԵՂԾԵՑ ՄԵՐ ԱՅՍ ԳԵՂԵՑԻԿ ԱՇԽԱՐՀԸ,

ԲՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏԱՐՈՒԱՆ ՉՈՐՄ՝

ԳԱՐՈՒՆ, ԱՄԱՌ,

ԱՇՈՒՆ ԵՒ ՉՄԵՌ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ:

Ո՞Վ ՍՏԵՂԾԵՑ ԵՐԿԻՆՔՆ ՈՒ ԵՐԿԻՐԸ,

Ո՞Վ ՍՏԵՂԾԵՑ ԱՐԵԻԸ, ԼՈՒՍԻՆԸ, ԱՍՏՂԵՐԸ ԵՒ

ՄՈԼՈՐԱԿՆԵՐԸ:

Ո՞Վ ՍՏԵՂԾԵՑ ԵՐԿԻՆՔԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ, ԾՈՎԵՐՈՒՆ

ՋՈՒԿԵՐԸ ԵՒ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԱՊՐՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ:

Ո՞Վ ՍՏԵՂԾԵՑ ՄԱՐԴԸ:

ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԸ ԻՆՉՈ՞Վ ԿԸ ՏԱՐԲԵՐԻ ՄԻՒՍ ԲՈԼՈՐ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԷՆ:

**ԳԻՏՆԱԼՈՒ ԵՒ ՍՈՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍ ԲՈԼՈՐԸ, ՊԷՏՔ Է ԿԱՐԴԱԼ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ: ԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՋԻ ՏՈՒԱԾ ՄԻԱԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔՆ
Է, ՈՒՐ ԿՐՆԱՆՔ ԳՏՆԵԼ, ԿԱՐԴԱԼ, ՀԱՍԿՆԱԼ ԵՒ ՈՒՆԵՆԱԼ ԲՈԼՈՐ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ:**

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻՆ ՄԷՋ ԿԸ ԿԱՐԴԱՆՔ:

Երբ տակաւին աշխարհը չէր ստեղծուած, տիեզերքը ձեւ չունէր, խաւար ու մուխ էր աշխարհը եւ ոչ մէկ կեանք կար:

Կար ժամանակ երբ աշխարհ, երկինքն ու երկիրը չկային:

Մարդիկ չկային:

Կենդանիներ չկային:

Ծովեր, ջուրեր ու գետեր չկային:

Լեռներ, դաշտեր ու ծառեր չկային: Արեւ, լուսին եւ աստղեր չկային: Բայց, միայն

Աստուած կար:





Մուխ եւ խաւար էր ամէն
տեղ եւ ամէն ինչ,

Աստուած միայն կար

եւ Աստուծոյ Հոգին կը

չըլէր տիեզերքի վրայ:


Աստուած բարի էր: Ան ուզեց աշխարհը ստեղծել:

Աստուած առաջին օրը ստեղծեց լոյսը:

Աստուած ըսաւ, «Լո՛յս թող ըլլայ» եւ

լոյս եղաւ:

Աստուած լոյսը զատեց խաւարէն:




Լոյսին անուներ կոչեց ցերեկ,

եւ խաւարին

անուներ՝



գիշեր կոչեց:



Երկրորդ օրը, Աստուած ստեղծեց երկինքը:

Երրորդ օրը, Աստուած ստեղծեց ծովն ու
ցամաքը, լիճերն ու գետերը
եւ ամէն տեսակ բոյսերը:

Չորրորդ օրը, Աստուած ստեղծեց արեւը,
լուսինը եւ աստղերը:




Հինգերորդ օրը, Աստուած
ստեղծեց ջուրերու մէջ



ապրող ձուկերը եւ ամէն տեսակ



կենդանիները,
երկնքի մէջ թռչող
թռչունները իրենց
զանազան
տեսակներով:



Վեցերորդ օրը, Աստուած
ստեղծեց ցամաքի վրայ ապրող
կենդանիները:



Վեցերորդ օրուան մէջ Աստուած ստեղծեց
նաեւ մարդը իր պատկերին պէս եւ զայն
կոչեց Ադամ:

Աստուած երկրի հողէն
շինեց մարդը, իր
շունչէն շունչ եւ հոգիէն
հոգի տալով, Աստուած
մարդը իր




նմանութեամբ ստեղծեց: Ադամ ունեցաւ անմահ հոգի:

Աստուած Ադամին համար շինեց
Եդեմի գեղեցիկ պարտէզ՝ դրախտը:

Դրախտին մէջ ամէն տեսակ
պտղատու ծառեր եւ բոյսեր կային:

Աստուած Դրախտին մէջ բուսցուց



նաեւ երկու ծառեր. մէկը կենաց ծառ կը կոչուէր, միւսը՝

բարիի ու չարի

գիտութեան ծառ:

Աստուած Ադամին

ըսաւ. -Դրախտի բոլոր




ծառերու պտուղներէն կրնաս ուտել, բայց բարիի ու չարի

գիտութեան ծառէն մի' ուտեր,

որովհետեւ այն օրը որ անկէ ուտես,

պիտի մեռնիս:



Հիմա որ կարդացիր, հասկցա՞ր, կրնա՞ս պատասխանել
հարցումներուն:

Այո:

1.- Ո՞վ ստեղծեց մեր այս գեղեցիկ աշխարհը:

2.- Ո՞վ ստեղծեց բնութիւնը եւ տարուան չորս՝ Գարուն, Ամառ,
Աշուն եւ Ձմեռ եղանակները:

3.- Ո՞վ ստեղծեց երկինքն ու երկիրը:

4.- Ո՞վ ստեղծեց արեւը, լուսինը, աստղերը եւ մոլորակները:

5.- Ո՞վ ստեղծեց երկինքի թռչունները, ծովերուն ձուկերը եւ երկրի վրայ ապրող կենդանիները:

6.- Ո՞վ ստեղծեց մարդը:

7.- Մարդ արարածը ինչո՞վ կը տարբերի միւս բոլոր կենդանիներէն:

8.- Երբ աշխարհ, երկինքն ու երկիրը, մարդիկ ու կենդանիներ
չկային, ո՞վ կար միայն :

9.- Այդ ժամանակ Աստուծոյ Յոգին ո՞ւր էր եւ ի՞նչ կըներ:

10.- Աստուած առաջին օրը ի՞նչ ստեղծեց:

11.- Աստուած լոյսին անունը ի՞նչ կոչեց:

12.- Աստուած խաւարին անունը ի՞նչ կոչեց:

13.- Աստուած երկրորդ օրը ի՞նչ ստեղծեց:

14.- Աստուած երրորդ օրը ի՞նչ ստեղծեց:

15.- Աստուած չորրորդ օրը ի՞նչ ստեղծեց:

16.- Աստուած հինգերորդ օրը ստեղծեց ջուրերուն մէջ ապրող

երկնքի մէջ թռչող թռչունները _____:

17.– Վեցերորդ օրը, Աստուած ստեղծեց ցամաքի վրայ ապրող

_____ : Վեցերորդ օրուան մէջ
Աստուած ստեղծեց

նաեւ _____ եւ զայն _____ կոչեց:

18.– Աստուած ի՞նչ բանէ շինեց մարդը:

19.– Ո՞վ մարդուն տուաւ շունչ եւ անմահ հոգի:

20.- Աստուծոյ Ադամին համար շինած գեղեցիկ պարտեզը ի՞նչ կը կոչուէր:

21.- Աստուած ի՞նչ պատուիրեց Ադամին:

Աստուած Ադամին ըսաւ. Դրախտի բոլոր ծառերու պտուղներէն կրնաս ուտել, բայց _____ ու _____

_____ ծառէն _____, որովհետեւ այն օրը որ անկէ

ուտես, _____:

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՍՏԵՂԾԻ ԵՒԱ ԿԻՆԸ



*Ադամ թէեւ բոլոր կենդանիները
ունէր, սակայն առանձին էր Եդեմի
պարտէզին մէջ: Աստուած որոշեց*

*Ադամին տալ իրեն նման կեանքի ընկեր մը: Ուստի Աստուած
Ադամին խորուսկ քուն մը տուաւ եւ քնացած ատենը անոր կողի
ոսկորներէն մէկը առաւ ու այդ ոսկորէն շինեց Եւան ու զայն*



*Ադամին տուաւ,
իրեն կին ըլլալու:*

Ա ս տ ու ա ծ

Ադամին առջեւ

*բերաւ երկրի բոլոր կենդանիները որպէսզի Ադամ անոնց
իւրաքանչիւրին յարմար անուն մը տայ: Ադամին տուած անուն-*

ներով ճանչցուեցան
երկնքի ու երկրի
կենդանիներուն անուն-
ները:



Աստուած Ադամին
ու Եւային տուաւ

երկրի բոլոր բարիքները եւ օրհնեց զանոնք ըսելով. «Աճեցէ՛ք,



բազմացէ՛ք, լեցուցէ՛ք
երկիրը եւ տիրեցէ՛ք
անոր»:

Ադամ եւ Եւա
շատ երջանիկ էին
դրախտին մէջ:

Հիանալի էր դրախտը,

հոն կային գոյնզգոյն ծաղիկներ, պտղատու ծառեր, սիրուն

կենդանիներ եւ չորս գետեր: Անոնք կը վայելէին Աստուծոյ բոլոր բարիքները եւ առանց արգելքի կը տեսնէին եւ կը խօսէին Աստուծոյ հետ: Անոնք չունէին ոչ մէկ հոգ կամ վիշտ:

Եօթներորդ օրը, Աստուած հանգիստ ըրաւ, եւ պատուիրեց որ մարդիկ ալ նոյնպէս հանգիստ ընեն:



Սատանան, որ նախապէս հրեշտակ էր, սակայն հպարտանալով երբ չարացաւ ու Աստուծոյ դէմ ելաւ, Աստուած զինք պատժեց եւ երկինքէն վար նետեց:

Սատանան այս անգամ
նախանձեցաւ Ադամի ու Եւայի
վայելած երջանկութեան եւ
ուզեց Աստուծոյ դէմ
անհնազանդութեան մղել
զանոնք:



Չարցումներուն պատասխանէ՛ ամբողջական
նախադասութիւններով:

1.- Ո՞վ ստեղծեց Եւա կինը:

2.- Աստուած Ադամին քնացած ատեն ի՞նչ ըրաւ:

3.- Ինչո՞ւ Աստուած Ադամին առջեւ բերաւ երկրի բոլոր
կենդանիները:

4.- Աստուած Ադամին ու Եւային երկրին բոլոր բարիքները տալով օրհնեց եւ ի՞նչ ըսաւ:

5.- Ադամ եւ Եւա երջանի՞կ էին դրախտին մէջ:

6.- Ինչպիսի՞ տեղ մըն էր դրախտը: Դրախտին մէջ ինչե՞ր կային:

7.- Ադամ եւ Եւա կը վայելէին Աստուծոյ բոլոր բարիքները եւ առանց արգելքի Ի՞նչ կ'ընէին եւ ինչպիսի՞ կեանք կ'ապրէին:

8.- Ի՞նչ ըրաւ Աստուած եօթներորդ օրը եւ Ի՞նչ պատուիրեց մարդոց:

9.- Ինչո՞ւ Աստուած պատժեց Սատանային եւ ո՞ւր նետեց:

10.- Ինչո՞ւ Սատանան Ադամին եւ Եւային Աստուծոյ դէմ
անհնազանդութեան մղեց:



ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

Օր մը երբ Եւան առանձին էր,
Սատանան Սատանան օձի
կերպարանք առնելով մօտեցաւ անոր
եւ Աստուծոյ կողմէ արգելուած
գիտութեան ծառին պտուղը ցոյց



տալով գովեց եւ ըսաւ. «Այդ պտուղէն
ուտելով չէք մեռնիր. այն օրը որ ուտէք,
ձեր աչքերը պիտի բացուին եւ աստուած-
ներու պէս պիտի
ըլլաք՝ բարին ու
չարը գիտնալով»:

Եւա օձին խօսքերէն խաբուելով եւ
ծառին գեղեցկութենէն հրապուրուե-
լով՝ փրցուց ծառին պտուղներէն



ու կերաւ: Եւս համոզեց
Ադամը, որպէսզի ինք ալ
ուտէ ծառին պտուղէն:
Ադամ լսեց կնոջը, առաւ
պտուղը եւ կերաւ: Երբ



երկուքն ալ կերան, յանկարծ իրենց աչքերը բացուեցան եւ
զգացին թէ մերկ էին, եւ անմիջապէս թզենիի տերեւներով
ծածկեցին իրենց մերկութիւնը: Որովհետեւ, մինչեւ այդ պահը
չէին գիտեր իրենց մերկ ըլլալը:






Յանկարծ Դրախտին մէջ լսուեցաւ Աստուծոյ ձայնը.

«Ո՞ր ես Ադամ»:

*Ադամ եւ եւա Աստուծոյ
ձայնը լսելով, ծառերու մէջ
պահուրտեցան:*


Կրկին Աստուծոյ ձայնը



բարձր հնչեց. «Ո՞ր ես Ադամ»:

Ադամ երբ լսեց Աստուծոյ ձայնը, դողալով պատասխանեց.

- «Պարտէզին մէջ ձայնդ լսեցի, ով Աստուած, եւ վախցայ, որ ուզեաւ մերկ էի ու պահուրտեցայ»:



«Արդեօք կերա՞ր այն ծառէն,


որուն համար պատուիրած էի որ չուտես», ըսաւ Աստուած:



Ադամ սաստիկ վախցած, ինքզինք արդարացնելով ըսաւ.

- «Այն կինը զոր ինծի ընկեր տուիր, ան ինծի տուաւ այդ ծառին

պտուղէն եւ ես ալ կերայ»:



Իսկ Եւան պատասխանեց. «Օձը խաբեց զիս եւ ես կերայ»:
Աստուած անիծեց Օձը, ապա Ադամին ու Եւային դառնարով
ուժգին գոչեց. «Դրախտէն դո՛ւրս, քանի որ դուք անհնազանդ
եղաք: Ասկէ ետք ծանր աշխատանքով եւ չարչարանքով պիտի
ապրիք: Այլեւս անմահ չէք: Հողէն ստեղծուեցաք եւ հողին
պիտի վերադառնաք»:

Ադամ եւ Եւա տրտու՛մ տխուր դուրս ելան Դրախտէն:





Ներքեւի նախադասութիւնները հետեւեալ յարմար բառերով ամբողջացուր:

հրապուրուելով, *պիտի բացուին, համոզեց,
գիտութեան, չէք մեռնիր. բարին ու չարը,
աչքերը բացուեցան, ծառերու մէջ պահուըտեցան,
թզենիի տերեւներով:*

Օր մը երբ Եւան առանձին էր, Սատանան օձի կերպարանք
առնելով մօտեցաւ անոր եւ Աստուծոյ կողմէ արգիլուած —————
—————ծառին պտուղը ցոյց տալով գովեց եւ ըսաւ. «Այդ
պտուղէն ուտելով —————. այն օրը որ ուտէք,
ծեր աչքերը ————— եւ աստուածներու պէս
պիտի ըլլաք՝ —————»:

Եւա օձին խօսքերէն խաբուելով եւ ծառին գեղեց-կութենէն
—————փրցուց ծառին պտուղներէն ու կերաւ: Եւա
————— Ադամը, որպէսզի ինք ալ ուտէ ծառին
պտուղէն:

Երբ երկուքն ալ կերան, յանկարծ իրենց—————
—————եւ զգացին թէ մերկ էին, եւ անմիջապէս —————
—————ծածկեցին իրենց մերկութիւնը:

Յանկարծ Դրախտին մէջ լսուեցաւ Աստուծոյ ձայնը.

«Ո՞ր ես Ադամ»:

Ադամ եւ Եւա Աստուծոյ ձայնը լսելով, _____

_____:



Ընտրէ՛ ճիշդ պատասխանը

Ա.

— Ադամ եւ Եւա երջանիկ էին դրախտին մէջ եւ Աստուծոյ հնազանդ մնացին:

— Աստուած գովեց Ադամին եւ Եւային, որովհետեւ անոնց շատ կը սիրէր:

— Ադամ եւ Եւա Աստուծոյ պատուիրանը լսեցին եւ հնազանդեցան:

— Սատանան օձի կերպարանքով նախ խաբեց Ադամը:

— Աստուած դրախտէն դուրս վռնտեց Ադամին եւ Եւային:

Բ.

— Ադամ անմեղ էր որովհետեւ, իր կնոջ հաւատաց:

— Եւա անմեղ էր որովհետեւ, Սատանային չհաւատաց ու չխաբուեցաւ:

— Աստուած գովեց եւ օրհնեց օձը:

— Ադամ եւ Եւա անհնազանդ ըլլալէ ետք, շարունակեցին դրախտին մէջ երջանիկ ապրիլ:

— Ադամ եւ Եւա անհնազանդ ըլլալէ ետք, աշխարհի վրայ չարչարանքով պիտի ապրէին:

Գ.


— Ադամ եւ Եւա ծառի պտուղը ուտելէ ետք անմահացան:

— Ադամ եւ Եւա տրտուն տխուր դուրս ելան դրախտէն:

— Ադամ եւ Եւա հողէն ստեղծուած էին եւ բնաւ չմեռան:

— Սատանան ըսաւ. «*Յողէն ստեղծուեցաք եւ հողին պիտի վերադառնաք*»:

— Ադամ եւ Եւա շատ ուրախ զուարթ դուրս ելան դրախտէն:



ԱՍՏՈՒԱԾ ՄԵՁ ԿԸ ՍԻՐԷ

Աստուած հայրական սիրով մեզ կը սիրէ:

Աղամ եւ Եւա իրենց անհնազանդութեան եւ մեղքին պատճառով դրախտէն դուրս՝ Աստուծոյ ներկայութենէն վռնտուեցան: Անոնք եւ իրենց զաւակները աշխարհի վրայ ապրեցան չարչարանքով լեցուն կեանք մը:

Թէեւ անոնք դրախտէն վռնտուեցան, սակայն Աստուած անոնց յանձնեց աշխարհը իր բոլոր բարիքներով:

Աստուած մարդուն հրաման տուաւ իշխելու, խնամելու եւ հոգ տանելու ծովու ձուկերուն, երկինքի թռչուններուն, եւ այն բոլորին, որոնք երկրի վրայ կը գտնուին:

Եթէ Աղամ ու Եւա չմեղանչէին, յաւիտեան պիտի ապրէին: Աստուած մարդուն հոգին յաւիտենական տանջանքէ փրկելու համար, անոր հողեղէն մարմինը մահուան դատապարտեց:

Բարեգութ Աստուած, դրախտէն ու իր ներկայութենէն վռնտելէ ետք, իր հոգածութեան ներքեւ պահեց Աղամն ու Եւան եւ իր յարա-

բերութիւնը չկտրեց մարդոց հետ: Աստուած խոստացաւ իր Միածին Որդի, Յիսուս Քրիստոսի միջոցաւ փրկել մարդ արարածը իր մեղքերէն ու ետ ընդունիլ դրախտէն ներս:

Հարցումներուն պատասխանէ՛ անբողջական նախադասութիւններով:

1.– Ադամ եւ Եւա դրախտէն դուրս վճնտուելէ ետք, աշխարհի վրայ ինչպիսի՞ կեանք ապրեցան:

2.– Թէեւ Ադամ եւ Եւա անհնազանդութեան եւ մեղքի պատճառով դրախտէն դուրս վճնտուեցան, սակայն Աստուած հայրական սիրով սիրեց եւ անոնց ի՞նչ յանձնեց:

3.– Աստուած մարդուն ի՞նչ բաներու վրայ հրաման եւ իրաւունք տուաւ իշխելու եւ հոգ տանելու:

4.– Եթէ Ադամ եւ Եւա չմեղանջէին պիտի մեռնէի՞ն:

5.– Աստուած ինչո՞ւ համար մարդուն հողեղէն մարմինը մահուան դատապարտեց:

6.– Աստուած դրախտէն վռնտելէ ետք Ադամն ու Եւան, իր կապերը կտրե՞ց, մոռցա՞ւ զանոնք: Ի՞նչ ըրաւ:

7.– Ինչո՞ւ Աստուած խոստացաւ իր Միածին Որդի Յիսուս Բրիստոսը աշխարհ ղրկել:





Աստուած կը խնամէ երկինքի թռչունները, երկրի կենդանիները, ծառերն ու ծաղիկները, եւ մանաւանդ իր գաւակները: Ժամանակին համեմատ անձրեւ կը դրկէ, որպէսզի աճին բոյսերը եւ կերակրուին իր բոլոր արարածները:

«Դիտեցէ՛ք երկինքի թռչունները. ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձեն եւ ո՛չ ալ շտեմարաններու մէջ կ'ամբարեն, եւ սակայն ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Զէ՞ որ դուք Աստուծոյ աչքին թռչուններէն գերազանց էք» (Մատթէոս 6:26):

ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԱԾ ՊԱՐԳԵՒՆԵՐԸ

Աստուած մարդոց բարիքին համար, բնութիւնն ու երկիրը օժտած է չորս եղանակներով (ԳԱՐՈՒՆ, ԱՄԱՌ, ԱՇՈՒՆ ԵՒ ԶՄԵՌ):

Աստուած ստեղծած է արեւը լոյս, տաքութիւն եւ կեանք տալու:

Աստուած ստեղծած է օդը, որպէսզի բոյսերը, կենդանիներն ու մարդիկ կարենան շնչել:

Աստուած մարդիկը օժտած է բանականութեամբ, այսինքն՝ խելքով, մտածելու կարողութեամբ եւ ազատութեամբ:

Աստուած մարդոց տուած է աչքեր, որպէսզի անոնք տեսնեն աշխարհի գեղեցկութիւնները եւ գանազանն գոյները:

Աստուած մարդոց տուած է քիթ, որպէսզի ծաղիկներուն բոյրը առնեն:

Աստուած մարդոց տուած է բերան, որպէսզի կերակուր ուտեն:

Աստուած մարդոց տուած է ձեռքեր, որպէսզի առարկաներ բռնեն:

Աստուած մարդոց տուած է ոտքեր, որպէսզի երկրի վրայ քայլեն:

Աստուծոյ կամքն է, որ մեզի յանձնուած երկինքն ու երկիր աշխարհը մաքուր պահենք, հոգանք, խնամենք, գուրգուրանք եւ տիրութիւն ընենք:

Մեր պարտականութիւնն է, շնորհակալ ըլլալ եւ փառք տալ Աստուծոյ, մեզի տուած կեանքին եւ բոլոր տեսակ բարիքներուն համար:

Նոյնպէս շնորհակալութիւն պէտք է յատնենք մեր հայրիկին, մայրիկին, ուսուցիչներուն, ընկերներուն, հարազատներուն եւ բոլոր մեզի բարիք ընողներուն:

Չարցումներուն պատասխանէ՛:

1.– Աստուած բնութիւնն ու երկիրը քանի՞ եղանակներով օժտած է: Թուէ՛ զանոնք:

2.– Ինչո՞ւ Աստուած արեւը եւ օդը ստեղծած է:

3.– Մարդը աշխարհի միւս արարածներէն ինչո՞վ կը տարբերի:

4.– Ինչի՞ կը ծառայեն մարդոց աչքերը:

5.– Ինչո՞ւ համար է քիթը:


6.– Ինչո՞ւ համար է բերանը:

7.– Ի՞նչ է պաշտօնը մարդոց ձեռքերուն եւ ոտքերուն:


8.– Ինչպէ՞ս պէտք է վերաբերուինք Աստուծոյ մեզի յանձնած երկինքին ու երկրին հետ:

9.– Ինչո՞ւ պետք է շնորհակալ ըլլանք Աստուծոյ:

10.– Ուրիշ որո՞նց շնորհակալ պետք է ըլլանք:



Ամբողջացու՛ր վարի նախադասուժիւնը:



Արեւին



Ուտելիքիս



Ծնողքիս



Խաղալիքներուս



Գիրքերուս



Ընտանիքիս



Շնորհակալ եմ Աստուած _____ համար:

ԱԴԱՄ ԵՒ ԱՅԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ

Դրախտէն արտաքսուելէ ետք, Ադամ եւ Եւա տխուր էին: Դժուար էր իրենց կեանքը: Չարչարանքով եւ յոգնութեամբ իրենց ուտելիքը կը ճարէին: Անոնք ունեցան շատ գաւակներ ու թոռներ: Ադամ եւ Եւա յաճախ իրենց գաւակներուն եւ թոռներուն կը պատմէին դրախտի պարտէզին ու Աստուծոյ սիրոյն մասին: Միշտ կը խրատէին հնազանդիլ եւ աղօթել Աստուծոյ:



Ադամ Եւայի գաւակներէն Կայէնը, չար ու անհնազանդ էր: Այդ



պատճառաւ ալ Աստուած անոր եղբօր՝ Աբելին նուէրը ընդունեց: Կայէն գայրացաւ եւ նախանձելով իր Աբել եղբօր, օր մը դաշտին մէջ առանձին տեսնելով, սպաննեց ու փախաւ: Կայէնի

չար սերունդները կոչուեցան աշխարհի կամ մարդոց որդիներ:

Աղամ Եւայի գաւակներէն էր Սէթը: Ան իր գաւակներուն եւ թոռներուն աստուածապաշտութեամբ դաստիարակեց: Սէթի սերունդները կոչուեցան Աստուծոյ որդիներ: Փամանակի ընթացքին Սէթի եւ Կայէնի սերունդները իրարու հետ ամուսնանալով, հետզհետէ Աստուծոյ մոռցան եւ չարանալով ամէն տեսակ մեղք գործեցին: Իրարու նկատմամբ սիրով չէին վարուեր: Կը գողնային, կը խաբէին եւ գիրար կը սպաննէին: Աստուած երկինքէն տեսնելով մարդոց չարութիւնը, որոշեց ջրհեղեղով պատժել գանոնք:

Ներքեւի նախադասութիւնները հետեւեալ յարմար բառերով ամբողջացուր:

Աստուծոյ որդիներ, Աբելին նուէրը, չար ու անհնազանդ էր, հնազանդիլ եւ աղօթել Աստուծոյ, Աստուծոյ սիրոյն, աշխարհի կամ մարդոց որդիներ, որոշեց ջրհեղեղով պատժել,

1.- Աղամ եւ Եւա յաճախ իրենց գաւակներուն եւ թոռներուն կը պատմէին դրախտի պարտեզին ու _____մասին: Միշտ կը խրատէին հնազանդիլ եւ աղօթել Աստուծոյ:

2.-Ադամ Եւայի զաւակներէն Կայէնը, _____:
Այդ պատճառաւ ալ Աստուած անոր եղբօր՝ Աբելին նուէրը
ընդունեց:

3.- Կայէնի չար սերունդները կոչուեցան _____
_____:


4.- Սէթի սերունդները կոչուեցան _____:

5.- Աստուած երկինքէն տեսնելով մարդոց չարութիւնը,


_____:



Կայէն հողագործ էր



Աբել խաշնարած էր



Աստուած ընդունեց Աբելին գոհը

Աբել բարկացաւ եւ նախանձե մղուած,
սպաննեց իր եղբայրը



ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏ

Սեթի սերունդէն
 կ'ապրէր շատ բարի,
 աստուածավախ Նոյ
 անունով արդար մարդ
 մը, որ չարութիւն չէր
 գործեր: Աստուած
 Նոյին յայտնեց թէ
 ջրհեղեղով պիտի
 պատժէ մեղաւոր



մարդիկը եւ պատուիրեց Նոյին որ մեծ տապան մը շինէ, որպէսզի երբ
 անձրեւները սկսին, ինք եւ իր ընտանիքը տապան մտնելով ազատին:
 Աստուած նաեւ Նոյին պատուիրեց, որ երկրի ընտանի կենդանիներէն
 եօթնական զոյգ ու վայրի կենդանիներէն մէյ մէկ զոյգ տապանէն
 ներս առնէ:

Երբ Նոյ իր կնոջ եւ երեք որդիներուն՝ Սեմ, Գամ եւ Յաբէթի ու
 անոնց կիներուն հետ ապաստանեցաւ իր շինած տապանին մէջ,



Աստուած քառասուն օր՝ գիշեր ու ցերեկ
զօրաւոր անձրեւ տեղացուց երկրի վրայ:
Ջուրերը ծածկեցին երկրագունդի բոլոր
դաշտերն ու լեռները: Բոլոր մարդիկ եւ
ամէն շունչ ունեցող կենդանիները մահա-

ցան: Նոյեան տապանը ապահով ջուրերուն
վրայէն ծփալով, հանգչեցաւ Արարատ
լեռան վրայ:



Երկու հարիւր յիսուն օր ետք, ջուրերը
կամաց-կամաց ցամքեցան եւ ցամաքը երեւցաւ: Նոյ, իր կնոջ եւ երեք
որդիներուն ու անոնց կիներուն հետ, ինչպէս նաեւ բոլոր անասուն-
ներով, դուրս եկաւ տապանէն: Անոնք իջան Արարատ լեռան բարձուն-
քէն: Նոյ իր ընտանիքի անդամներով Աստուծոյ գոհութիւն յայտնեց ու

գոհ մատուցանեց: Աստուած ընդու-
նեց Նոյի գոհը եւ լսեց անոր աղօթքը,
օրհնեց եւ խոստացաւ ջրհեղեղով
չպատժել մարդիկը: Իր ուխտին
որպէս նշան՝ Աստուած հաստատեց ծիածանը կամ ծիրանի գօտին:



Հարցումներուն պատասխանէ՛:

1.– Ինչո՞ւ համար Աստուած որոշեց պատժել երկրի բնակիչները:

2.– Ինչպիսի՞ մարդ մըն էր Նոյ: Ան ո՞ր սերունդէն էր: Աստուած ի՞նչ յայտնեց Նոյին ու ի՞նչ պատուիրեց:

3.– Նոյ ինչո՞ւ համար շինեց տապանը:

4.– Նոյի ընտանիքէն զատ ուրիշ որո՞նք մտան տապանէն ներս:


5.– Քանի՞ օր՝ ցերեկ ու գիշեր անձրեւ տեղաց: Ինչո՞ւ մարդիկ եւ անասուններ մահացան:



6.– Նոյի տապանը ո՞ր լեռան վրայ հանգչեցաւ: Քանի՞ օրեր ետք ցամաքը երեւցաւ:

7.– Նոյ եւ իր որդիներն ու անասունները տապանէն դուրս ելլելէ վերջ ի՞նչ ըրին:

8.– Աստուած իր ըրած ուխտին որպէս նշան ի՞նչ հաստատեց երկնակամարին վրայ:

9.– Նոյ քանի՞ որդիներ ունէր եւ ի՞նչ էին անոնց անունները:





ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Ջրհեղեղէն ետք, Նոյի երեք որդիներուն՝ Սեմի, Քամի եւ Յարէթի զաւակներն ու թոռները բազմացան, եւ դարձեալ երկիրը լեցուցին:



Երկրորդ Ջրհեղեղէ մը վախնալով, մարդիկ մտածեցին շինել շատ բարձր աշտարակ մը: Անոնք մոռցած էին Աստուծոյ խոստումը եւ ըսին. «Եկէ՛ք շինենք նոր քաղաք մը եւ անոր մէջ բարձրացնենք այնպիսի աշտարակ մը, որուն ծայրը դպչի երեկնքին: Եւ եթէ Աստուած դարձեալ Ջրհեղեղ ընէ, կը բարձրանանք անոր վրայ եւ կ'ազատինք»: Եւ սկսան շինել աշտարակը: Անոնց պետն էր Բել անուանով հսկայ մը:

Աստուած երբ տեսաւ որ երկրի բնակիչները հպարտանալով, իբր խոստումը մոռցած են՝ շատ բարկացաւ, եւ զանոնք պատժելու համար խառնեց անոնց լեզուները: Շփոթուեցին մը ստեղծուեցաւ, եւ անոնք սկսան մէկի տեղ բազմաթիւ լեզուներով խօսիլ, մէկուն ըսածը միւսը չհասկնալով կռիւ ծագեցաւ եւ աշտարակի շինութիւնը կէս մնաց:

Այն տեղը, ուր այդ քաղաքն ու աշտարակը կը շինուէին,

կոչուեցաւ Բաբելոն, որ կը նշանակէ խառնաշփոթութիւն:

Ապա աշտարակը շինողները ցրուեցան աշխարհի զանազան

կողմերը:

**Ներքեւի նախադասութիւնները հետեւեալ յարմար
բառերով ամբողջացուր:**

*կոչուեցաւ Բաբելոն, շատ բարձր աշտարակ մը, Բել անունով,
եւ կ'ազատինք, խառնեց անոնց լեզուները, խառնաշփոթութիւն,
մէկի տեղ բազմաթիւ լեզուներով խօսիլ, խոստումը մոռցած են:*

1.- Երկրորդ ջրհեղեղէ մը վախճալով, մարդիկ մտածեցին
_____:


2.- «*Եթէ Աստուած դարձեալ ջրհեղեղ ընէ, կը բարձրանանք
անոր վրայ եւ _____*»:

3.- Եւ սկսան շինել աշտարակը: Անոնց պետն էր _____
— հսկայ մը:

4.- Աստուած երբ տեսաւ որ երկրի բնակիչները հպարտա-
նալով, _____ շատ բարկացաւ, եւ զանոնք
պատժելու համար _____:

5.- Շփոթութիւն մը ստեղծուեցաւ, եւ անոնք սկսան _____
_____ մէկուն ըսածը միւսը չհասկնալով կռիւ
ծագեցաւ եւ աշտարակի շինութիւնը կէս մնաց:

6.- Այն տեղը, ուր այդ քաղաքն ու աշտարակը կը շինուէին,
_____, որ կը նշանակէ խառնաշփոթութիւն:



«Նկէ՛ք շինենք նոր քաղաք մը եւ անոր մէջ բարձրացնենք այնպիսի աշտարակ մը, որուն ծայրը դպչի երկինքին»:

ՀԱՅՐ ԱԲՐԱՀԱՄ

Աբրահամ, Նոյ նահապետի Սեմի ցեղէն էր: Իր եղբօրորդի Ղովտի հետ խաշնարածութեամբ կը գրադուէին: Ժամանակի ընթացքին երբ իրենց անասունները բազմացան՝ ստիպուեցան բաժնուիլ իրարմէ: Անոնք Քանանու երկրին արեւելքը եւ հարաւային շրջաններուն մէջ բնակութիւն հաստատեցին:



Աբրահամ արդար եւ աստուածավախ էր: Ան չհետեւեցաւ իր շրջապատի կռապաշտ մարդոց չար ընթացքին: Աստուած մոռցած, մարդիկ չարացած էին ու բարի Աստուծմէ հեռացած՝ կը պաշտէին կաւէ ու պղինձէ շինուած արձաններ: Սակայն Աբրահամ, իր հայրերու պաշտած, երկինքի ու երկրի արարիչ՝ ճշմարիտ Աստուծոյ հաւատաց ու բոլոր սրտով զԱյն պաշտեց: Այդ պատճառով ալ, Աստուած օրհնեց

եւ բազմապատկեց անոր ծառաները, ուղտերն ու ոչխարները, կալուածներն ու հարստութիւնը:

Հակառակ Աբրահամի եւ իր կնոջ Սառայի հարստութեան, անոնց վայելած դիրքին ու համբաւին՝ երջանիկ չէին: Որովհետեւ, Աբրահամ հարիւր տարեկան եղած էր, իսկ իր կինը Սառա ինիսուն, բայց տակաւին զաւակ չունէին:

Աստուած հասկցաւ անոնց տխրութեան պատճառը, եւ օր մը երբ Աբրահամ կ'աղօթէր, Աստուած մխիթարեց զայն ու ըսաւ. «Եթէ քեզի զաւակ տամ, կը խոստանա՞ս դուն եւ քու սերունդներդ ինծի հաւատարիմ պիտի մնաք»: Աբրահամ, ուրախութեամբ, այո՛, պատասխանեց:

Հսէ՛, ըսաւ Աստուած. «Ահա իմ եւ քու սերունդիդ միջեւ ուխտ պիտի կնքեմ. երկինքի աստղերուն ու ծովու աւազներուն չափ պիտի բազմացնեմ քու սերունդդ: Եւ շատ ազգերու նախահայր պիտի դառնաս»: Իրապէս Աբրահամ դարձաւ ազգերու եւ ժողովուրդներու նախահայր: Իր սերունդէն ծնան թագաւորներ: Աստուած Աբրահամի սերունդէն մարդոց փրկութեան համար, աշխարհ դրկեց իր Միածին Որդի Յիսուսը:

Աստուած իր խոստումը յարգեց: Աբրահամ եւ Սառա մանչ գաւակ մը ունեցան, եւ անուներ դրին Իսահակ:



Աբրահամ աստուածպաշտութեամբ դաստիարակեց իր գաւակը: Իսահակ մեծցաւ եւ եղաւ գեղեցիկ պատանի մը: Աբրահամ շատ կը սիրէր իր գաւակը:

Օր մը Աստուած ուզեց փորձել Աբրահամին հաւատքը եւ գիտնալ թէ անիկա զի՞նք թէ իր գաւակը աւելի կը սիրէ: Ուստի Աստուած ըսաւ Աբրահամին. «Աբրահամ, ա՛ն սիրելի որդիդ Իսահակը, ելի՛ր լեռ, եւ հոն գայն ինծի ողջակէզ ըրէ»:

Աբրահամի համար թէեւ շատ դժուար էր կորսնցնել իր միակ գաւակը, բայց առանց առարկելու կատարեց Աստուծոյ կամքը: Ան առաւօտ կանուխ ելլելով ողջակէզի համար փայտեր կտրեց ու իշուն վրայ բեռցուց: Ան իր մէջքի գօտիին մէջ մեծ դանակ մը դրաւ, եւ իր հետ առնելով պատանի Իսահակը, դէպի լեռ ճամբայ ելաւ:

Ճամբան Իսահակ իր հօրը հարցուց. «Հայր, ահա փայտերը եւ կրակը, բայց ողջակէզ ըլլալու գառնուկը ո՞ր է»:

*– Որդեակ, «Աստուած
գառնուկը կը ղրկէ», պատաս-
խանեց Աբրահամ:*



*Երբ լեռ հասան, Աբրահամ
քարեր հաւաքեց եւ վրան փայ-
տերը շարելով՝ պատրաստեց
զոհի սեղանը: Ապա Իսահակի
դառնալով ըսաւ.*

*– Աստուած քեզի արժանի տեսաւ, որպէսզի դո՛ւն ըլլաս իրեն
ընդունելի զոհը:*

*Այս ըսելով, Աբրահամ զոհասեղանին վրայ կապեց Իսահակը, եւ
ձեռքին առնելով դանակը, երբ կը պատրաստուէր Աստուծոյ զոհել իր
զաւակը՝ յանկարծ Աստուծոյ հրեշտակը երկինքէն վար իջնելով,
Աբրահամի ձեռքէն բռնեց ու ըսաւ.*

*– Աբրահամ, Աբրահամ, մի՛ զոհեր տղադ: Հիմա Աստուած
հասկցաւ որ դուն անկեղծ եւ հաւատարիմ ես հաւատքիդ մէջ եւ
հնազանդ Աստուծոյ, եւ Աստուածը քու զաւակէդ աւելի կը սիրես՝
պիտի խնայէ քեզի:*

Մինչ այդ, Աբրահամ իր աչքերը վեր վերցնելով, մացառներու մէջ իր եղջիւրներէն բռնուած խոյ մը տեսաւ, եւ զայն առնելով ողջակէզ ըրաւ Աստուծոյ իր որդւոյն փոխարէն:

Յարցումներուն պատասխանէ՛:

1.– Ո՞վ էր Աբրահամ եւ ինչո՞վ կը զբաղուէր:

2.– Աբրահամ ինչպիսի՞ մէկն էր:

3.– Չար մարդիկ ի՞նչ կը պաշտէին:

4.– Աբրահամ որո՞ւն հաւատաց ու պաշտեց:

4.– Հակառակ Աբրահամի ունեցած հարստութեան, ինչո՞ւ տխուր եր:

5.– Աստուած մարդոց փրկութեան համար, Աբրահամի սերունդէն աշխարհ ո՞վ ղրկեց:

6.– Աստուած Աբրահամին հաւատքը փորձելու համար ի՞նչ ըսաւ իրեն:


7.– Աբրահամ լեռ ելլելով քարերով ի՞նչ պատրաստեց:

8.– Աբրահամ երբ կը պատրաստուէր Աստուծոյ զոհել Իսահակը, Աստուծոյ հրեշտակը ի՞նչ ըսաւ Աբրահամին:

9.- Աբրահամ Իսահակին տեղ ի՞նչ զոհեց:



«Աբրահամ, ա՛ն սիրելի որդիդ Իսահակը, ելի՛ր լեռ, եւ հոն զայն ինծի ողջակէզ ըրէ՛»:



«Աբրահամ, Աբրահամ, մի՛ զոհեր տղադ: Հիմա Աստուած հասկցաւ որ դուն անկեղծ եւ հաւատարիմ ես հաւատքիդ մէջ»:

ՅԻՍՈՒՍԻ ԱԻԵՏՈՒՄԸ

Պաղեստինի Նազարէթ քաղաքին մէջ, կը բնակէր Մարիամ անու-
նով, շատ բարի եւ աստուածավախ
ազնիւ աղջիկ մը:

Ան նշանուած էր արդար ու
բարեսիրտ Դաւիթ թագաւորի
սերունդէն Յովսէփի հետ:

Օր մը, երբ Մարիամ
կ'աղօթէր, յանկարծ սենեակը
լուսաւորուեցաւ եւ Աստուծոյ
Գաբրիէլ հրեշտակը Մարիամին
երեւցաւ ու ըսաւ.



- «Մարիա՛մ, մի՛ վախնար: Աստուծոյ Աբրահամի՛ն եւ մարգարէ-
ներո՛ւն խոստացած շնորհքի՛ն արժանացար: Աստուած քեզի՛ ընտրեց,
եւ դուն որդի մը պիտի ունենաս: Անոր անունը Յիսուս պիտի դնես:
Ան Աստուծոյ Որդին պիտի ըլլայ: Մարդիկը իրենց մեղքերէն պիտի
փրկէ եւ թագաւորէ ամբողջ աշխարհի վրայ»:

Մարիամ զարմացաւ հրեշտակի խօս-
քերուն վրայ, քանի որ ինք դեռ ամուս-
նացած չէր, եւ չէր կրնար երեխայ
ունենալ: Այն ատեն հրեշտակը ըսաւ.



«Սուրբ Հոգին պիտի գայ վրադ եւ
Աստուծոյ զօրութիւնը հովանի ու պաշտ-
պան պիտի ըլլայ քեզի: Ան որ քեզմէ
պիտի ծնի սուրբ է, եւ Աստուծոյ Որդի
պիտի կոչուի»:

Մարիամ ընդունեց եւ հնազանդեցաւ հրեշտակի խօսքերուն ու
ըսաւ. «Ես Տիրոջ աղախինն եմ: Խոնարհութեամբ կը հնազանդիմ: Թող
Աստուծոյ կամքը ըլլայ»:

Յովսէփ՝ Մարիամի նշանաձր արդար եւ ազնիւ մարդ ըլլալով, երբ
իմացաւ աւետման դէպքին եւ Աստուծոյ Սուրբ Հոգիով ծնելիք Յիսուս
Փրկիչի մասին, ընդունեց եւ հնազանդեցաւ Աստուծոյ:

Հայ Եկեղեցին իր աղօթքներուն եւ շարականներուն մէջ Ս. Կոյս
Մարիամը կը կոչէ «Նոր Եւա», որովհետեւ ան չնմանեցաւ Ադամի

կնոջ՝ Եւային, որ չհնազանդեցաւ Աստուծոյ: Աղամական կամ Առաջին մեղքին պատճառով, մարդիկ մահուամբ պատժուեցան: Իսկ Մարիամի առաքինի վարքին ու Աստուծոյ հնազանդութեան շնորհիւ, Աստուած աշխարհ դրկեց մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս:

Հայ Եկեղեցին Ս. Կոյս Մարիամին բացառիկ պատիւ ընծայելով՝ Աստուածածին կամ Աստուածամայր կոչումները տուած է:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.– Ինչպիսի՞ անձեր էին Մարիամ եւ Յովսէփ:

2.– Օր մը Մարիամ աղօթած պահուն ո՞վ երեւցաւ:

3.– Ի՞նչ ըսաւ Աստուծոյ Գաբրիէլ հրեշտակը Մարիամին:

4.– Մարիամ ի՞նչ անուկ պիտի դնէր ճանկան:


5.– Յիսուսի աշխարհ գալուկ նպատակը ի՞նչ պիտի ըլլար:

6.– Մարիամ ի՞նչ ըսելով հրեշտակին, կը հնազանդի Աստուծոյ:

7.– Չայ Եկեղեցին ինչո՞ւ Մարիամը «Նոր Եւա» կը կոչէ:

8.– Չայ Եկեղեցին ինչո՞ւ «Աստուածածին կամ Աստուածամայր» կը կոչէ Մարիամը:





Ս. Կոյս Մարիամ, իր մաքուր եւ առաքինի կեանքովր, նմանեցաւ անրիժ շուշանի եւ արժանացաւ Աստուածամայր ըլլալու պատիւին:

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հրեշտակի աւետումէն ետք, բաւական ժամանակ անցաւ: Այդ օրերուն, Հռոմի Օգոստոս կայսրը հրամանագիր հանեց, իր կայսրութեան սահմաններուն ներքեւ գտնուող բոլոր երկիրներուն բնակիչներուն մարդահամարը կատարելու: Հետեւաբար, ամէն մարդ պէտք էր երթար իր ծննդավայրը, հոն արձանագրուելու համար: Եւ քանի որ Մարիամի նշանածը՝ Յովսէփ Դաւիթ թագաւորի ցեղէն էր, ստիպուեցաւ Մարիամի հետ Նազարէթ քաղաքէն Դաւիթ թագաւորի ծննդավայր Բեթղեհէմ երթալ: Երբ Յովսէփն ու Մարիամը Բեթղեհէմ հասան, յոգնած էին: Հանգստանալու եւ գիշերը անցընելու համար, ուզեցին պանդոկէ մը ներս սենեակ գտնել: Սակայն բոլոր պանդոկները լեցուն ըլլալով, ստիպուեցան մօտակայ փոքր քարայրի մը մէջ, ուր մարդիկ



կատարելու: Հետեւաբար, ամէն մարդ պէտք էր երթար իր ծննդավայրը, հոն արձանագրուելու համար: Եւ քանի որ Մարիամի նշանածը՝ Յովսէփ Դաւիթ թագաւորի ցեղէն էր, ստիպուեցաւ Մարիամի հետ Նազարէթ քաղաքէն Դաւիթ թագաւորի ծննդավայր Բեթղեհէմ երթալ: Երբ Յովսէփն ու Մարիամը Բեթղեհէմ հասան, յոգնած էին: Հանգստանալու եւ գիշերը անցընելու համար, ուզեցին պանդոկէ մը ներս սենեակ գտնել: Սակայն բոլոր պանդոկները լեցուն ըլլալով, ստիպուեցան մօտակայ փոքր քարայրի մը մէջ, ուր մարդիկ

իրենց կենդանիները կը պահէին, հոն գիշերել: Կէս գիշերին ծնաւ աշխարհի Փրկիչ Յիսուս Մանուկը: Մարիամ նորածին Յիսուսը խանձարուրով փաթթեց եւ դրաւ մսուրին մէջ:

Յանկարծ երկինքի մէջ մեծ լոյս մը ծագեցաւ, եւ խումբ-խումբ



հրեշտակներ երեւցան: Անոնք ուրախութեան երգեր երգելով զԱստուած կ'օրհնէին ու կ'ըսէին. «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն եւ օրհնութիւն»:


Ապա հրեշտակները Յիսուսի ծննդեան բարի լուրը, Բեթղեհէմի մօտակայքը գտնուող եւ իրենց ոչխարներուն պահպանութիւն ընող հովիւներուն աւետեցին: Բարի հովիւները իրենց գառնուկներէն քանի մը հատը առին եւ գացին նորածին Յիսուս Մանուկը տեսնելու: Եւ իրապէս, երբ հասան եւ քարայր մտան ի՛նչ տեսնեն:

Հրեշտակներուն պատմածին պէս, փոքրիկ մանուկ մը կար մսուրին մէջ: Մարիամ եւ Յովսէփ կեցած էին իր քով: Իսկ կենդանիները իրենց

չունչով կը տաքցնէին փոքրիկ Յիսուսը: Հովիւները մօտեցան եւ խոնարհուլթիւն ըրին եւ իրենց հետ բերած գառնուկները նուիրեցին Յիսուս Մանուկին: Յետոյ մեծ ուրախութեամբ գացին եւ աւետեցին Յիսուս Մանուկի ծնունդը եւ ամէն մարդու պատմեցին ինչ որ տեսան:



Այդ օրերուն, արեւելքէն Հրէաստան եկան երեք իմաստուն մոգեր: Անոնք երկինքի մէջ լուսաւոր մեծ



աստղ մը տեսնելով՝ հասկցեր էին որ աշխարհի համար նոր թագաւոր ու Փրկիչ մը ծնած է: Երեք Մոգերը նուէրներ առին եւ ճամբայ ելան: Յիսուսի փայլուն աստղը առաջնորդեց զիրենք մինչեւ Յիսուսի ծնած քարայրը: Անոնք ներս մտան եւ խոնարհուլթիւն ընելով իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս նուիրեցին Յիսուս Մանուկին:

Հարցումներուն պատասխանէ՛:

1.– Յովսէփ եւ Մարիամ ինչո՞ւ Նազարէթէն Բեթղեհէմ գացին:

2.– Ո՞ր քաղաքին մէջ եւ ո՞ւր ծնաւ Յիսուս:

3.– Հովիւները ի՞նչ ըրին երբ հրեշտակներէն բարի լուրը լսեցին:

4.– Հրեշտակներ երկինքի մէջ օրհնութեան ի՞նչ երգ երգեցին:

5.– Որո՞նք էին մոգերը եւ ինչպէ՞ս գիտցան Յիսուսի ծննդեան մասին:

6.— Փայլուն աստղը նոգերուն ո՞ւր առաջնորդեց: Մոգերը
ի՞նչ նուիրեցին Մանուկ Յիսուսի:



ԾՆՆԴԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի
Որ յայսմ ատուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
Տան անտիս աշխարհի:

«Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ»:

Ծնաւ նոր Արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Չի վասըն մարմնացաւ:

«Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ»:

Անբաւելին երկնի եւ երեկրի
Ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ
Ի սուրբ այրին բազմեցաւ:

«Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ»:

ԾՆՆԴԵԱՆ ԾԱՌ

Տեսէք սիրուն ծննդեան ծառ,
Տեսէք փայլի ի՞նչ պայծառ,
Ո՛հ ինչ գիշեր հիանալի,
Յիսուս ծնաւ սիրելի:

Ամէն աչքեր խանդով վառին,
Բեռնատրուած սա ծառին,
Ամէն սիրտեր արդ թող ցնձան,
Չի ծնաւ Յիսուս Մեսիան:



Յիսուս Փրկիչ դու ինձ համար,
Երկնից իջար մեր աշխարհ,
Դու՝ որ ինձի կեանք ես տուեր,
Կու տամ սիրտս Քեզ նուր:

*«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ
յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
հաճութիւն եւ օրհնութիւն»:*



Ծնաւ նոր Արքայ ի Բերդեհէն քաղաքի

Ո՞ր է նորածին թագաւորը, մենք տեսանք անոր աստղը արեւելքի մէջ:



Աստղը առաջնորդեց երեք մոզերուն մինչեւ այն քարայրը, ուր Մանուկը կը գտնուէր: Երբ ներս մտան, երկրպագեցին Մանուկին, ապա Յիսուս Մանուկին ընծայեցին ոսկի, կնդրուկ եւ զմուռս:



Ոսկին՝ քազաւորութեան նշան է: Կնդրուկը՝ խունկի անուշաքոյր տեսակ է:
Իսկ զմուռը՝ անմահութեան նշան է:

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Յիսուս իր մանկուլթիւնը անցուց Գալիլիոյ Նազարէթ քաղաքին մէջ: Հայր Յովսէփ բարի ու արդար հայր էր եւ լաւ հոգ կը տանէր իր ընտանիքին: Ան արհեստով ատաղձագործ էր: Ուղղամիտ էր եւ աշխատասէր: Պատանի Յիսուս խելացի, հնազանդ եւ աշխատասէր պատանի մը ըլլալուն, իր հօրմէն սորվեցաւ հիւս-



նուլթեան արհեստը: Յիսուս ոչ միայն կ'օգնէր Հայր Յովսէփին, այլ յաճախ առանձինը կ'աշխատէր:

Յիսուս շատ կը սիրէր ծառերը, ծաղիկները, թռչուններն ու աղաւնիները, եւ ազատ ժամերուն կը խնամէր զանոնք:

Ամէն տարի Զատիկի տօնին, բազմաթիւ ուխտաւորներու նման, Յիսուսի ծնողները որպէս բարեպաշտ եւ աւանդապաշտ ընտանիք, կ'երթային Երուսաղէմի Տաճար: Հոն աղօթք եւ զոհ մատուցանելու եւ

տօնախմբելու իրենց ժողովուրդին Աստուծոյ
զօրութեամբ, Եգիպտոսի գերութենէն
ազատագրութեան յիշատակը:



Յիսուս երբ տասներկու տարեկան եղաւ,
Օրէնքի համաձայն պէտք էր Երուսաղէմի
Տաճար երթար, եւ մինչ այդ իր սորված
կրօնական գիտելիքներու շուրջ քննութիւն
անցընէր: Այդ սովորութեան համաձայն
պատանի Յիսուս, իր ծնողներուն հետ Երուսաղէմ գնաց: Տօնական
օրերու աւարտէն ետք, Յովսէփ ու Մարիամ պատրաստուեցան եւ
ուրիշ ուխտաւորներու հետ ճամբայ ելան դէպի Նազարէթ:

Մէկ օր ճամբորդելէ ետք, նկատեցին որ Յիսուս իրենց խումբին
մէջ չէր: Կը կարծէին որ բարեկամներու կամ իրեն տարեկից
ընկերներու խումբին մէջ անոնց հետ կը ճամբորդէր: Դրացիներու եւ
այլ ճամբորդներու հարցուցին, բայց ոչ ոք գիտէր Յիսուսի ուր
գտնուիլը: Յիսուսի ծնողները մտահոգուեցան եւ բաւական փնտուելէ
ետք երբ չգտան՝ ստիպուած Երուսաղէմ վերադարձան: Հոն ալ երեք
օր փնտուեցին, բայց Յիսուս մէջտեղ չկար:

Յովսէփ ու Մարիամ յուսահատ, շահ տխրեցան: Վերջապէս ըսին. «Անգամ մըն ալ Տաճար երթանք ու հոն նայինք»: Գացին Տաճար եւ ինչ տեսնեն: Պատանի Յիսուսը, Տաճարի վարդապետներուն հետ նստած, կը խօսակցէր եւ այնպիսի՝ խելացի հարցումներ կ'ընէր ու անոնց հարցումներուն իմաստութեամբ կը պատասխանէր: Բոլոր ներկաները կը զարմանային եւ կը հիանային Անոր իմաստութեան: Երբ Մարիամ եւ Յովսէփ տեսան Յիսուսը, իրենք ալ անակնկալի եկան: Մարիամ Յիսուսի մօտ վազելով ըսաւ. «Զաւա՛կս, մեզի շատ




մտահոգեցուցիր. գիտե՞ս երեք օրէ ի վեր հայրդ ու ես քեզ կը փնտռէինք»: Յիսուս, անուշիկ մը ժպտաց, ու մօրը դառնալով պատասխանեց. «Մա՛յր, ինչո՞ւ գիտուրիչ տեղեր փնտռած էք. չէի՞ք գիտեր, որ ես պէտք էր Հօրս տունը ըլլայի»: Յիսուս կ'ուզէր ըսել որ

ինք Աստուծոյ Որդին է, իսկ Տաճարը՝ Աստուծոյ տունը: Սակայն Յովսէփ ու Մարիամ չհասկցան Յիսուսի ըսած խօսքերուն իմաստը:

*Անոնք ուրախուլթեամբ գրկեցին, համբուրեցին եւ Յիսուսը
առնելով ճամբայ ելան դէպի Նազարէթ:*

*Պատանի Յիսուս Նազարէթի մէջ հասակով, իմաստուլթեամբ եւ
Աստուծոյ շնորհքով կը մեծնար ու կը զարգանար: Պատանի Յիսուս կը
սիրէր իր ընկերները եւ իր վարք ու բարքով, բարի օրինակ կ'ըլլար
բոլորին: Մարդիկ կը հիանային եւ երանի կու տային Անոր ծնողքին:*



ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՒՄ


Հակառակ մարդուն անհնազանդութեան եւ մեղանշումին, Աստուած գանազան առիթներ եւ միջոցներ ստեղծեց մարդիկը դաստիարակելու, ներելու անոնց յանցանքները եւ փրկութեան առաջնորդելու: Աստուած ոչ միայն բնութիւնը օրէնքներով օժտեց, այլեւ մարդոց գանազան օրէնքներ տալով՝ սորվեցուց ինչպէ՛ս սիրել եւ երախտապարտ ըլլալ Աստուծոյ եւ կամ ինչպէ՛ս վարուիլ իրարու հետ:

Երկնաւոր մեր Հայրը, իր Միածին Որդի Յիսուս Քրիստոսը աշխարհ դրկելով, ո՛չ միայն մարդուն հանդէպ իր սէրը ցոյց տուաւ, այլեւ Քրիստոսի միջոցաւ Աստուած առիթ տուաւ որ դրախտէն վտարուած մարդը, երկրաւոր կեանքի աւարտին՝ արժանանայ երկինքի արքայութեան եւ յաւիտենական կեանքի:

Քրիստոս իր կեանքով մեզի ցոյց տուաւ թէ Աստուած ինչքան կը սիրէ մեզ, եւ միշտ պատրաստ է ներելու: Աստուած կ'ուզէ որ մենք Յիսուսի նման ըլլանք բարի եւ աշխարհի մէջ ապրող մարդիկը եւ իր ստեղծած բոլոր արարածները սիրենք:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Չանագան ձեւի խաւաքարտերու վրայ գրեցէ՛ք ներքեւի գրութիւնները: Կարդացէ՛ք եւ սորվեցէ՛ք:



Չարցումներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:

1.– Ինչպիսի՞ պատանի մըն էր Յիսուս: Ան իր մանկութիւնը ո՞ր անցուց:

2.– Չայր Յովսէփ ինչպիսի՞ մէկն էր եւ ի՞նչ էր իր արհեստը:

3.– Ձատիկի տօնին ինչո՞ւ հրեաներ Երուսաղէմ կ'երթային:

4.– Ինչո՞ւ պատանի Յիսուս երբ տասներկու տարեկան եղաւ, իր ծնողքին հետ Երուսաղէմի Տաճար գնաց:

5.– Երուսաղէմէ վերադարձին Մարիամ եւ Յովսէփ ի՞նչ նկատեցին: Ո՞ր վերադարձան Յիսուսը փնտռելու համար:

6.– Անոնք Յիսուսը ո՞ւր գտան:

7.– Ուրկե՞զ գիտենք որ Յիսուս խելացի էր:

8.– Յիսուս ի՞նչ պատասխանեց մտահոգ իր մօրը:

9.– Մենք ինչպե՞ս պետք է վերաբերինք մեր ծնողներուն հետ:

10.- Դասարանին մէջ միասնաբար քննարկեցէ՛ք եւ բացատրեցէ՛ք Յիսուսի հետեւեալ խօսքերը.

«Չէ՛ք գիտեր որ ես Չօրս տունը պետք է ըլլամ»:



Հայր Յովսէփ շատ կը սիրէր
Յիսուս Մանուկը եւ յաճախ կը
գրկէր զԱյն ու կը գգուէր:

Հայր Յովսէփ հիւսն էր: Յիսուս հնազանդ
պատանի մը ըլլալուն, յաճախ կ'օգնէր հայր
Յովսէփին:



Յիսուս յաճախ առանձինը կ'աշխատէր:





«Զաւա՛կս, մեզի շատ մտահոգեցիր. գիտե՞ս երեք օրէ ի վեր հայրդ ու ես քեզ կը փնտռէինք»:

ՅԻՍՈՒՍ ԿԸ ՍԻՐԷ ԵՒ ԿՕՐՀՆԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Օր մը Յիսուս կը քարոզէր: Գեղեցիկ, իմաստալից ու դաստիարակիչ էին Անոր խօսքերը: Հետաքրքիր անցորդներ եւ ժողովուրդի բազմութիւն մը հաւաքուած էր իր շուրջ՝ մտիկ ընելու համար զինք:




Քարոզութենէն ետք, խումբ մը մայրեր ուզեցին իրենց մանուկները Յիսուսի մօտեցնել, որպէսզի օրհնէ զանոնք:

Երկարատեւ խօսելէ, ուսուցանելէ եւ բժշկութիւններ կատարելէ ետք, Յիսուսի դէմքին վրայ նշմարելի էին քրտինքն ու յոգնածութիւնը:

Աշակերտները չուզեցին աւելի յոգնութիւն եւ ձանձրոյթ պատճառել Յիսուսի: Անոնք Յիսուսի մօտ իրենց փոքրիկները բերող

մայրերը սաստեցին եւ արգիլեցին ըսելով.
«Հեռացէ՛ք, Վարդապետը յոգնած է. ձեզի
ժամանակ չունի»:



Յիսուս սակայն, շատ կը սիրէր մա-
նուկները: Ան բարկացաւ իր աշակերտ-
ներուն եւ ըսաւ. «Թող տուէ՛ք որ այդ
մանուկները ինծի գան, եւ մի՛ արգիլէք
անոնց, որովհետեւ այդպիսիներուն է
Աստուծոյ արքայութիւնը: Լաւ գիտցէ՛ք,

ան որ մանուկներու նման բարի ու անկեղծ չըլլայ, Աստուծոյ սիրոյն
եւ արքայութեան պիտի չարժանանայ»:

Ապա Յիսուս, գուրգուրանքով իր գիրկը առաւ մանուկները,
սիրեց ու շոյեց անոնց գլուխները եւ իր ձեռքը անոնց վրայ դնելով՝
օրհնեց:

Յիսուս կը սիրէ բոլոր մանուկները եւ կը գուրգուրայ անոնց
վրայ: Յիսուս կ'ուզէ որ մանուկներ ըլլան հնազանդ, բարի, կոկիկ,
մաքրասէր եւ աշխատասէր: Շնորհալի եւ Յիսուսի սիրելի են այն
մանուկները, որոնք իրենց փոքր հասակին եկեղեցի կ'երթան,

*Կ'աղօթեն, կ'օգնեն ուրիշին եւ միշտ կը ջանան Աստուծոյ կամօքը
կատարել:*



Չարցունքներուն պատասխանէ՛ անբողջական նախադասութիւններով:

1.– Ինչո՞ւ ժողովուրդը եւ անցորդներ հետաքրքիր էին եւ Յիսուսի շուրջ հաւաքուած էին:

2.– Խումբ մը մայրեր ինչո՞ւ փափաքեցան իրենց մանուկները Յիսուսի մօտեցնել:

3.– Յիսուսի աշակերտները ինչո՞ւ արգելք եղան մայրերուն:

4.– Յիսուս քարկացաւ եւ ի՞նչ ըսաւ իր աշակերտներուն:

5.– Յիսուս կը սիրէ՞ բոլոր մանուկները:

6.– Յիսուս ինչպիսի՞ մանուկներ կ'ուզէ տեսնել:

7.– Յիսուսի համար ո՞ր մանուկները շնորհալի եւ սիրելի են:




*«Թոյլ տուէ՛ք որ այդ մանուկները ինծի
գան, եւ մի՛ արգիլէք անոնց»:*



*«Ան որ մանուկներու նման բարի ու
անկեղծ չըլլայ, Աստուծոյ սիրոյն եւ
արքայութեան պիտի չարժանանայ»:*

ՅԻՍՈՒՍ ԱՇԽԱՐՀԻ ՓՐԿԻՉԸ

Յիսուս աշխարհ եկած էր մարդոց հոգիները ղժոխքի յաւիտենական կրակէն փրկելու, եւ Աստուծոյ մարդոց համար պատրաստած Երկինքի Արքայութեան երանութեան արժանացնելու: Ան իր քարոզութիւններով, ուսուցումներով եւ հրաշագործութիւններով կը ջանար մարդոց հաւատքը զօրացնել, միտքերն



ու հոգիները լուսաւորել: Ժողովուրդի առօրեայ կեանքէն առնուած առակներով, օրինակներով եւ սրտի մօտիկ պատմութիւններով, Յիսուս սիրել եւ ներել կը սորվեցնէր, որպէսզի մարդիկ գիտնան, ճանչնան ու սիրեն իրենց արարիչ Աստուածը: Խաղաղութեամբ ապրին եւ երախտապարտ ըլլան Աստուծոյ տուած բոլոր բարիքներուն: Միշտ հնազանդին ու գործադրեն Անոր պատուիրանները, ըլլան յարգալիր, ճշմարտախօս, արդար ու բարի, ինչպէս մեր Երկնաւոր Հայրը կատարեալ ու բարի է:

Յիսուս որպէս Լո՛յս աշխարհ եկաւ, որպէսզի մարդոց կեանքը լուսաւորէ եւ Աստուծոյ առաջնորդէ: Ան որ իր խօսքերը կը լսէ ու իրեն կը հետեւի, խաւարի մէջ չի՛ քալեր, չարութիւն չի՛ գործեր, ո՛չ ալ մեղքի մէջ կը մնայ:



Յիսուս մեր բարի Հովիւն է: Մենք իր ոչխարներն ենք: Որպէս բարի Հովիւ, Յիսուս ո՛չ միայն պատրաստ է մեզի պաշտպանելու ամէն տեսակի վտանգներէն եւ փորձութիւններէն, այլեւ՝ իր կեանքը մեզի համար զոհելու, որպէսզի խաբուելով չիյնա՛նք ու կեր չղառնա՛նք չար Սատանային:

Յիսուս մեր Տէրն ու Փրկիչն է: Ան մեր սիրելի հայրն է, մեր եղբայրն է, մեր ընկերն ու մտերիմն է: Ան մի՛շտ մեր սրտին մօտ է: Կը տեսնէ եւ կը հետեւի մեզի: Կը լսէ մեր աղօթքները, կը կարդայ մեր մտածումները, գիտէ մեր կարիքներն ու սրտին գաղտնիքները: Եթէ մեր խնդրանքներուն մէջ արդար եւ անկեղծ ենք, Ան միշտ պատրաստ է մեզի լսելու եւ օգնութեան հասնելու:

Հարցումներուն պատասխանէ՛ անբողջական նախադասութիւններով:

1.– Ինչո՞ւ Յիսուս աշխարհ եկած էր:

2.– Յիսուսի քարոզներուն եւ հրաշագործութիւններուն նպատակը ի՞նչ էր:

3.– Յիսուս ինչո՞ւ առակներով եւ օրինակներով կը խօսէր:


4.– Յիսուսի խօսքերը լսողը եւ Իրեն հետեւողը ինչպիսի՞ կեանք կ'ունենայ:

5.– Յիսուս որպէս բարի Հովիւ կը սիրէ՞ մեզ: Իր կեանքը վտանգելու գնով ի՞նչ տեսակ վտանգներու դէմ մեզի կը պաշտպանէ: Ինչո՞ւ:

6.- Յիսուս մեր Տերն ու Փրկիչը, ե՞րբ եւ ինչո՞ւ կը լսէ մեր աղօթքները:



Որպէս բարի Հովիւ, Յիսուս ո՛չ միայն պատրաստ է մեզի պաշտպանելու ամէն տեսակի վտանգներէն, այլեւ՝ իր կեանքը մեզի համար զոհելու, որպէսզի խարուելով չիյնա՛նք ու կեր չդառնա՛նք չար Սատանային:



**ՅԻՍՈՒՍ ԿԸ ՀՐԱՇԱԳՈՐԾԷ
ԵՐԻՔՈՎԻ ԿՈՅՐԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ**

Յիսուս ժողովուրդին կողմէ ամենէն շատ սիրուած անձն էր: Բոլորն ալ կը հիանային Անոր իմաստուն խօսքերուն եւ կատարած հրաշքներուն վրայ: Ժողովուրդը ամէն օր ուրախութեամբ կը հետեւէր Յիսուսի, եւ յաճախ Անոր կ'ընկերանար երբ Յիսուս քաղաքէ-քաղաք կը ճամբորդէր:



Այսպէս, երբ Երիքով քաղաքը կ'երթային, քաղաքին դրան մօտ, ճամբուն եզերքը կոյր

մը նստած էր եւ ողորմութիւն կը խնդրէր: Երբ լսեց, թէ խուճբով մարդիկ կ'անցնին, հետաքրքրուեցաւ, թէ որո՞նք են եւ ի՞նչ կայ: Երբ իմացաւ, թէ Յիսուս կ'անցնէր, սկսաւ բարձր ձայնով կանչել. -

Յիսո՛ւս, ողորմէ՛, գթա՛ ինծի: Մօտը գտնուողները սկսան յանդիմանել զինք, բայց ինք աւելի բարձր ձայնով կը պոռար.


- Յիսո՛ւս, ողորմէ՛, գթա՛ ինծի:

Յիսուս երբ լսեց կոյրին աղաչանքը, կանգ առաւ, մօտեցաւ անոր եւ հարցուց. - Ի՞նչ կ'ուզես:

Կոյրը լսած ըլլալով Յիսուսի հրաշագործութիւններուն եւ կատարած բժշկութիւններուն մասին, հաւատքով լեցուն եւ վստահ որ Յիսուս պիտի կրնայ բանալ իր աչքերը, ըսաւ. - Տէ՛ր, աչքերս թող բացուին որ տեսնեմ:

Յիսուս գիտցաւ, թէ որքան մեծ է կոյրին հաւատքը եւ անչափելի է անոր փափաքը, որպէսզի աչքերը բացուին, մօտեցաւ եւ դպաւ կոյրին աչքերուն ու ըսաւ. - Կ'ուզեմ որ տեսնես, որովհետեւ հաւատքդ քեզ բժշկեց:

Նոյն պահուն կոյրին աչքերը բացուեցան եւ ան սկսաւ տեսնել: Ապա մեծ ուրախութեամբ Յիսուսի հետեւեցաւ եւ փառք տուաւ Աստուծոյ կատարուած մեծ հրաշքին համար: Ժողովուրդն ալ գարմացած սկսաւ մեծ ձայնով Աստուած օրհնել:



Հարցումներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:

1.- Յիսուս երիբով քաղաքի մօտ որո՞ւ հանդիպեցաւ: Ան
նստած ի՞նչ կ'ընէր:

2.- Կոյրը երբ իմացաւ որ Յիսուս այդ տեղէն կ'անցնի, ի՞նչ
ըրաւ:

3.- Յիսուս ինչո՞ւ կոյրին աչքերը բացաւ:

Կարեւոր գիտելիք

ա.- Յիսուս միշտ մեզի հետ է: Պէտք է իրեն դիմել ո՛չ թէ
նեղութիւններու ժամանակ միայն, այլ միշտ:

բ.- Շեշտել հաւատքին եւ աղօթքին դերը մարդոց բժշկու-
թիւններուն ժամանակ:

գ.- Յիսուս մեզմէ աւելի գիտէ մեր կարիքները: Ան կը
հասկնայ եւ կը բաժնէ մեր զգացումները:



*Կուգեմ որ տեսնես, որովհետեւ հաւատով քեզ
բժշկեց:*

*Տէ՛ր, աչքերս թող բացուին որ
տեսնեմ:*

**ՈՏԵԼՈՒԱՅ, ՎԵՐՁԻՆ ԸՆԹՐԻՔ
ԵՒ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ**

Յիսուսի յաջողութիւնները կը նեղացնէին հրեայ իշխանները, քահանայապետներն ու փարիսեցիները, որովհետեւ ժողովուրդը շատ կը սիրէր Յիսուսը: Անոր



խօսքերը, բարի գործերն ու հրաշքները պատճառ կ'ըլլային որ շատեր հեռանային անոնցմէ եւ հետեւէին Յիսուսի: Անոնց հակառակութիւնը, նախանձն ու ատելութիւնը Յիսուսի հանդէպ այնքա՛ն շատցաւ, որ որոշեցին սպաննել զինք, բայց կը վախնային ժողովուրդէն: Այդ պատճառաւ, ուզեցին իրենց չար արարքը ժողովուրդի աչքէն հեռու, գաղտնի կատարել: Անոնք գտան Յիսուսի տասներկու աշակերտներէն մին՝ Յուդան որ արժաթասէր էր, խոստացաւ երեսուն արծաթ դրամի փոխարէն, զիչերով Յիսուսի գտնուած տեղը ցոյց տայ, ու անոնց

մատնէ Յիսուսը:

Ահա հրեաներուն Չատիկի կամ Բաղարջակերացի տօնին, Յիսուս իր աշակերտներուն հետ ճաշի հրաւիրուեցաւ մեծահարուստ մարդու մը տունը:



Սովորութիւն էր որ ընթրիքէն առաջ լուացուէին: Երբ ամէնքը նստած պիտի ընթրէին, Յիսուս ելաւ սեղանէն, վերարկուն հանեց վրայէն, անձեռոց առաւ եւ գոգնոց մը կապեց մէջքին: Ապա կուժով ջուր առնելով խոնարհեցաւ իր աշակերտներուն ոտքերը լուալու: Աշակերտները զարմացած մնացին: Յիսուս լուաց բոլորին ոտքերը եւ ըսաւ. «Ինչո՞ւ կը զարմանաք: Այսօր ձեզի խոնարհութեան դաս մը տուի. ինչ որ ես ձեզի ըրի, նոյնը դուք ըրէ՛ք ուրիշներու. խոնարհ եղէ՛ք»:

Երբ բաղարջ հացով անոնք սկսան ուտել Չատիկական ընթրիք խորոված գառնուկը, Յիսուս ըսաւ. «Գիտէ՞ք թէ ես ձեզ ո՞րքան կը սիրեմ. բայց ձեր մէջ կայ մէկը, որ պիտի մատնէ զիս»: Եւ մինչ իր աշակերտները անակնկալի եկած ու շփոթած, կը մտածէին եւ Յիսուսի

կը հարցնէին թէ ով է այդ մատնիչը, Յիսուս ցած ձայնով Յովհաննէսին ըսաւ. *«Ան է մատնիչը, որուն համար այս պատառը կը թաթխեմ եւ իրեն կու տամ»*: Եւ Յիսուս պատառը թաթխելով տուաւ Յուդային: Յուդան շփոթեցաւ եւ պատառը առնելով դուրս գնաց:

Մինչ աշակերտները կը շարունակէին ընթրել, Յիսուս առաւ հացը, օրհնեց, կտրեց եւ տուաւ իր աշակերտներուն ըսելով՝ *«Առէ՛ք, կերէ՛ք այս իմ մարմինս է»*: Յետոյ բարձրացուց գինիով լեցուն բաժակը, գոհութիւն յայտնեց եւ օրհնելով տուաւ իր աշակերտներուն ու ըսաւ. *«Խմեցէ՛ք այս բաժակէն բոլորդ, որովհետեւ այս գինին Նոր Ուխտի իմ արիւնս է, որ պիտի թափի շատերու վրայ իրենց մեղքերուն թողութեան համար»*:

Ընթրիքէն ետք, Յիսուս պատուիրեց իր աշակերտներուն յաճախ կատարել այս արարքը իր յիշատակին համար, ապա անոնց հետ գնաց Գեթսեմանիի պարտէզը՝ աղօթելու, որովհետեւ գիտէր որ այդ գիշեր պիտի մատնուէր իրեն հակառակորդներուն եւ չար մարդոց ձեռքը:

Ահա Զատկական տօնին առթիւ էր, որ Վերնատան մէջ Յիսուս, իր աշակերտներով երբ Վերջին ընթրիքը կ'ընէր, օրհնելով հացն ու գինին՝ հաստատեց Սուրբ Հաղորդութեան Խորհուրդը:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մենք որպէս քրիստոնեաներ եւ Հայ Եկեղեցւոյ զաւակներ, մինչեւ այսօր, մեր եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագի ընթացքին խոստովանելէ ետք մեր մեղքերը, կը հաղորդուինք Քրիստոսի մարմնով եւ արեամբ:

Իսկ իր աշակերտներուն ոտքերը լուալով՝ Յիսուս անոնց ցոյց տուաւ խոնարհութեան ու սիրոյ մեծ օրինակ: Մենք ալ իբրեւ ճշմարիտ քրիստոնեաներ, պէտք է սիրենք զիրար եւ խոնարհաբար ծառայենք իրարու:

1.– Աւետարանական համապատասխան ընթերցուածները տեսնել Մատթէոսի 26:17-30, Յովհաննէսի 13:1-20 համարներուն մէջ:

2.– Մատնութիւնը վատ արարք է:

Դասարանին մէջ կարելի է աշակերտական կեանքէն օրինակներ տալ: Ուսուցիչներ թելադրելու են որ մատնութեան չար արարքը պէտք չէ՛ շփոթել ճշմարտախօսութեան եւ անկեղծութեան հետ: Իր ընկերը դատարանի եւ օրէնքի առջեւ պաշտպանելուն կամ յանցանքը ծածկելուն մէջ:


3.– Յիսուս իր աշակերտներուն ոտքերը լուաց, խոնարհութեան դաս մը տալու համար: Հին ատեն ստրուկները միայն իրենց տէրերուն ոտքերը կը լուային: Յիսուս իր այս արարքով ցոյց տուաւ, որ մէկուն ծառայելը կամ սիրելով անոր օգնելը ստրկութիւն չէ, այլ մեր պարտքը:

Հայ Եկեղեցին Ոտնլուայի արարողութիւնը կը կատարէ Աւագ Հինգշաբթի օրը:

4.– Սուրբ Պատարագը յիշատակն է Յիսուսի Վերջին Ընթրիքին: Յիսուս իր աշակերտներուն պատուիրեց զայն կատարել իր յիշատակին համար: Արարողութեան եւ աղօթքի ընթացքին նշխարը Յիսուսի մարմնին, իսկ գինին Յիսուսի արեան կը փոխուին: Երբ կը հաղորդուինք, Յիսուսն է որ մեր մէջ կ'ընդունինք: Հետեւաբար հաղորդուելէ առաջ, նախ պէտք է խոստովանինք մեր մեղքերը, սրբուինք եւ մաքրուինք եւ յետոյ երկիւղածութեամբ ստանանք սուրբ հաղորդութիւնը:

Հարցումներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:

- 1.- Որո՞նք էին Յիսուսի հակառակորդները եւ ինչո՞ւ կը նախանձէին:
- 2.- Ո՞վ խոստացաւ Յիսուսը մատնել չար փարիսեցիներուն ձեռքը:
- 3.- Անոնք ի՞նչ խոստացան մատնիչին:
- 4.- Ո՞ւր տեղի ունեցաւ զատկական վերջին ընթրիքը:
- 5.- Յիսուս ինչո՞ւ լուաց իր աշակերտներուն ոտքերը:
- 6.- Ինչպէ՞ս Յովհաննէս գիտցաւ թէ ո՞վ էր Յիսուսի մատնիչը:
- 7.- Ընթրիքի պահուն Յիսուս հացն ու գինին առնելով ի՞նչ ըսաւ եւ ի՞նչ ըրաւ:
- 8.- Ի՞նչ բան Յիսուսի մարմինն է:
- 9.- Ի՞նչ բան Յիսուսի արիւնն է:
- 10.- Ինչպիսի՞ դաս կրնանք քաղել ոտնլուայի օրինակէն:



ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՊԱՐՏԷՉԻՆ ՄԷՉ ՅԻՍՈՒՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Յուդա վերնատունէն
ելլելով անմիջապէս զնաց
Յիսուսի հակառակորդ
հրեայ մեծաւորներն ու
առաջնորդները տեսնելու:
Յուդա նախապէս համա-
ձայնած էր անոնց հետ, որ
եթէ իրեն երեսուն արծաթ




դրամ տան, ինք անոնց ցոյց պիտի տար Յիսուսի գտնուած տեղը:

Յիսուս գիտէր, թէ իր կեանքի վերջին օրերը կ'ապրէր: Վերնա-
տան մէջ ընթրիքէն ետք, Յիսուս իր աշակերտներով զնաց
Գեթսեմանիի մէջ գտնուող ձիթենեաց պարտէզը աղօթելու, որպէսզի
Հայր Աստուած գալիք օրերու դժուար եւ չարչարանքով լեցուն
ժամերուն իրեն հետ ըլլայ:

Աղօթելէ ետք, երբ հագիւ պարտէզէն իր աշակերտներուն քով

եկաւ Յիսուս, տեսաւ որ հրեաներու բազմութիւն մը ջահերով եւ գինուած սուրերով ու մահակներով կու գայ դէպի իրենց կողմը: Երբ մօտեցան, Յուդան անոնց մէջէն զատուեցաւ ու եկաւ համբուրեց իր Տէրը: Ան համաձայնած էր հրեաներուն հետ, թէ ո՛վ որ ես համբուրեմ, ան է Յիսուսը, ձերբակալեցէք:



Ի հարկէ, Յիսուս ամենակարող էր եւ եթէ ուզէր կրնար երկինքէն հրեշտակներու մեծ բազմութիւն մը կանչել եւ այդ ամբոխը պատժել, սակայն Յիսուս յոժարաբար յանձնուեցաւ անոնց, որովհետեւ Ան աշխարհ եկած էր խաչուելու եւ իր սուրբ արիւնով մաքրելու բոլոր մարդոց մեղքերը:

Յիսուս նայեցաւ մատնիչ Յուդային ու ըսաւ. «Յուդա՛, համբուրելո՞ւ վ կը մատնես զիս»:

Հրեաներ յարձակեցան Յիսուսի վրայ: Պետրոս առաքեալ իր


սուրը հանեց, զարկաւ քահանայապետին ծառային ու անոր ականջը կտրեց: Յիսուս բժշկեց ականջը, եւ ըսաւ Պետրոսին. *«Սուրդ տեղը դի՛ր: Ո՛վ որ սուր կ'առնէ իր ձեռքը, սուրով ալ կը մեռնի»:*

Ձերբակալեցին Յիսուսը ու տարին Կայիափա քահանայապետին մօտ, որպէսզի դատէ: Հոն հաւաքուած էին հրեայ իշխանաւորներ ու պատասխանատու պաշտօնեաներ: Անոնք վճռած էին ամէն գնով սպաննել Յիսուսը: Նոյնիսկ սուտ վկաներ կանչած էին զրպարտելու Յիսուսը: Բայց որքան ալ անոնք կ'ուզէին Յիսուսը մեղադրել վատ գործեր կատարելու մէջ, չէին յաջողեր, որովհետեւ Յիսուս արդար ու անմեղ էր:

Այն ատեն Կայիափա քահանայապետը մօտեցաւ Յիսուսի եւ հարցուց. *«Դո՞ւն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»:* Յիսուս պատասխանեց. *«Դուն ըսիր, որ ես եմ»:*

Քահանայապետին եւ հրեաներուն համար Յիսուսի այս խօսքը աններելի մեղք էր, որովհետեւ Յիսուս ինքզինք Աստուծոյ Որդի յայտարարելով՝ Աստուծոյ հաւասար հռչակած էր: Հրեաներ իրենց ականջները գոցեցին, իսկ Քահանայապետը իր հագուստները պատռելով ըսաւ. *«Այ ի՞նչ պէտք ունինք վկաներու: Ահաւասիկ ձեր*

ականջներով լսեցիք Աստուծոյ դէմ խօսած անարգանքը եւ ըրած հայհոյութիւնը: Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ հիմա»:



Բոլորը աղաղակեցին.

«Մահապարտ է»:

Յիսուսի այս դժուար

պահերուն, աշակերտները իրենց վախէն հեռացած էին: Իսկ մատնիչ Յուդան, երբ տեսաւ Յիսուսի չարչարանքները, զղջաց իր արարքին համար եւ հեռանալով՝ ինքզինք կախեց ու մեռաւ:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.— Աւետարանական համապատասխան ընթերցուածները տեսնել Մատթէոսի 26:14-15, 47-68, Մարկոսի 14:32-65 համարներուն մէջ:
- 2.— Յիսուս մահուան վտանգին մէջ ալ բարիք կը գործէ:
- 3.— Յրեաներ սուտ վկաներ բերելով, արդար դատաստան չեն կատարեր: Դատը գոնէ արդար պէտք է ըլլայ:
- 4.— Յուդան իրեն այնքան բարիք ընող իր Տէրը մատնեց երեսուն արծաթ դրամով: Եհ՞շդ էր իր ըրածը: Պէտք չէ չարին գործիք ըլլալ:

Հարցումներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:

- 1.– Ընթրիքէն վերջ, Յիսուս ինչո՞ւ աղօթելու գնաց Գեթսեմանիի պարտէզը:
- 2.– Ինչպէ՞ս ձերբակալեցին Յիսուսը:
- 3.– Ինչո՞ւ Յիսուս յոժարաբար յանձնուեցաւ թշնամի ամբոխին ձեռքը:
- 4.– Պետրոս ի՞նչ ըրաւ, երբ հրեաներ յարձակեցան Յիսուսի վրայ:
- 5.– Յիսուս բժշկելէ ետք քահանայապետին ծառային ականջը, ի՞նչ ըսաւ Պետրոսին:
- 6.– Կայիափա քահանայապետը Յիսուսի ի՞նչ հարցուց:
- 7.– Յիսուս ի՞նչ պատասխանեց Կայիափային:
- 8.– Ինչո՞ւ հրեաներ իրենց ականջները գոցեցին, իսկ քահանայապետը իր հագուստները պատռեց:
- 9.– Ձղջալէ ետք ի՞նչ ըրաւ մատնիչ Յուդան:




«Հա՛յր իմ, եթէ կարելի է՝
այս բաժակը հեռացո՛ւր
ինձմէ, բայց ո՛չ թէ ինչպէս
որ ես կ'ուզեմ, այլ ինչպէս
որ Դո՛ւն կ'ուզես»
Մատթէոս 26:39



«Հա՛յր, ժամանակը հասած է,
փառաւորէ՛ Որդիդ, որպէսզի
Որդիդ ալ Քեզ փառաւորէ»
Յովհաննէս 17:1

ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Յաջորդ առաւօտուն հրեաները տարին Յիսուսը երկրի Հռոմայեցի կառավարիչին Պիղատոսի մօտ, եւ պահանջեցին որ մահուան դատապարտէ զԱյն:



Պիղատոս հարցաքննեց Յիսուսը, բայց յանցանք չգտաւ եւ հասկցաւ որ Ան անմեղ է, եւ հրեաները չարութեան

ու նախանձի պատճառաւ կ'ուզեն Յիսուսը խաչել:

Այդ օրերուն սովորութիւն էր մահուան դատապարտուած մէկը Չատիկին ազատ արձակել: Պիղատոս երեք անգամ միջամտեց եւ ուզեց Յիսուսը ազատ արձակել: Սակայն հրեայ քահանայապետները, տաճարի պաշտօնեաներն ու ամբոխը միաբերան պոռագին. «Ո՛չ, խա՛չը հանէ, խա՛չը հանէ. իր տեղ Բարաբբա աւազակը ազատ արձակէ»:

Պիղատոս տեսներով
որ հրեաներ չեն հա-
մոզուիր, ճարահատ՝ ժո-
ղովուրդին առջեւ լուաց
իր ձեռքերը, Յիսուսը
յանձնեց զինուորներուն
ու ըսաւ. «Ահա՛ ձեր թա-




գաւորը ձեզի. ես մեղք չունիմ այս արդարին արիւնէն»: Իսկ անոնք
պատասխանեցին. «Անոր արիւնը մեր եւ մեր զաւակներուն վրայ
ըլլայ»:

Պիղատոս ստիպուած՝ Բարաբբան ազատ արձակեց եւ Յիսուսը
յանձնեց հրեաներուն որպէսզի խաչեն:

Հրեաներ ծաղրանքի համար Յիսուսի հագցուցին թագաւորական
կարմիր հագուստ, փուշէ պսակ դրին Անոր գլխուն որպէս թագ եւ աջ
ձեռքին եղէգ մը տուին իբր թագաւորական զաւագան, եւ սկսան
ծաղրել, զարնել ու չարչարել: Զինուորներէն ոմանք թքեցին անոր
վրայ, ոմանք ապտակ զարկին երեսին, ծեծեցին ու մտրակեցին: Ապա
ծանր խաչ մը դրին Անոր ուսին վրայ եւ ուրիշ երկու աւագակներու

հետ առաջնորդեցին դէպի
Գողգոթա, ուր կը սպաննու-
ւէին մահուան դատապար-
տրւածները: Հոն Գողգոթայի
բարձունքին Յիսուսը խաչե-
ցին երկու աւագակներուն
հետ: Յիսուսի խաչին գագա-



թը դրուած էր փոքրիկ տախտակ մը, որուն վրայ գրուած էր իր
յանցանքը. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»: Երբ կը խաչէին,
Յիսուս աղօթեց Աստուծոյ ըսելով. «Հա՛յր, ներէ՛ ասոնց, որովհետեւ
չեն գիտեր, թէ ի՛նչ կ'ընեն»:


Յիսուս խաչին վրայ առանձին մնացած էր: Իր առաքեալներէն
չատեր վախճալով ձգած ու փախած էին: Մօտը մնացած էին միայն
Յովհաննէս առաքեալ եւ Յիսուսի մայրը:

Յիսուսի կողքին խաչուած երկու աւագակներէն մէկը հաւատաց
Յիսուսի եւ ըսաւ. «Յիշէ՛ զիս, Տէ՛ր, երբ գաս Քու թագաւո-
րութեամբը»: Յիսուս անոր պատասխանեց. «Ծճմարիտ կ'ըսեմ քեզի,
այսօր ինձի հետ դրախտի մէջ պիտի ըլլաս»:

*Արդէն կէսօր եղած էր: Յանկարծ արեւը խաւարեցաւ եւ մթու-
թիւն տիրեց ամէն կողմ: Երբ Յիսուսի մահուան ժամը մօտեցաւ,
Յիսուս բարձր ձայնով աղաղակեց. «Հա՛յր, Քու ձեռքերուդ մէջ
կ'աւանդեմ իմ հոգիս»: Եւ գլուխը խոնարհեցնելով մեռաւ: Ահա
տաճարին վարագոյրը վերէն մինչեւ վար պատուուեցաւ, երկիրը
շարժեցաւ եւ ժայռեր ճեղքուեցան: Խաչին մօտ գտնուող հռոմէացի
զինուորները, երբ տեսան այս ամէնը, շատ վախցան եւ ըսին.
«Արդարեւ, Աստուծոյ Որդին էր Ասիկա»:*

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1.- Աւետարանական համապատասխան ընթերցուածները տեսնել Յովհաննէս 18:19-24, 28-40, 19:1-30 :
- 2.- Թէեւ հրեաներ իրենց կրօնական ատեանին մէջ Յիսուսը մահուան դատապարտեցին, սակայն մահուան վճիռը գործադրելու համար, Յռոմայեցի կառավարիչը պէտք էր հաստատէր յանցագործութեան տարողութիւնը եւ վերջնական մահուան վճիռը արձակէր: Յռոմէական օրէնքով, հռոմայեցի իշխանաւորները միայն իրաւունք ունէին մարդիկ մահուան դատա-պարտելու:
- 3.- Յիսուս զոհ գնաց հրեաներու կոյր ատելութեան, նախանձի եւ թշնամութեան:



Հարցումներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:

- 1.– Հռոմայեցի կառավարիչը Պիղատոս, Յիսուսը հարցաքննելէ ետք ի՞նչ հասկցաւ:
Ինչո՞ւ չդատապարտեց Յիսուսը:
- 2.– Պիղատոս Յիսուսը ազատ արձակել փափաքեցաւ, սակայն հրեայ ամբոխը միաբերան ի՞նչ պռռացին եւ ի՞նչ պահանջեցին:
- 3.– Ո՞վ ազատ արձակուեցաւ: Ինչպիսի՞ մէկն էր:
- 4.– Պիղատոս ինչո՞ւ ձեռքերը լուաց:
- 5.– Պիղատոս Յիսուսը յանձնելով զինուորներուն, ի՞նչ ըսաւ հրեաներուն:
- 6.– Յիսուս խաչին վրայ երբ առանձին էր, որո՞նք իր մօտ եղան:
- 7.– Յիսուս ո՞ւր խաչուեցաւ:
- 8.– Աւագակներէն մէկը Յիսուսի հաւատալով ի՞նչ ըսաւ:
- 9.– Երբ Յիսուս իր հոգին պիտի աւանդէր, բարձրաձայն ի՞նչ աղաղակեց:
- 10.– Երբ Յիսուս մահացաւ, ինչե՞ր պատահեցան:

ՅԻՍՈՒՍ ԽԱՉԸ ՇԱԼԿԱԾ
ԲԱՐՉՐԱՑԱԲ ԳՈՂԳՈԹԱ

Յովհաննէս 19:17



Մարդոցմէ արհամարհուեցաւ...
Մեր մեղքերն ու ցաւերը կրեց...
Մեր մեղքերուն համար
վիրաւորուեցաւ...
Սակայն իր վէրքերով բուժուեցանք...
Եսայի 53:3,4,5



ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Երբ իրիկունն եղաւ,
Յովսէփ Արիմաթացի անունով
բարեպաշտ հրեայ մը, որ
Պիղատոսի բարեկամն էր,
գնաց Պիղատոսին մօտ եւ անկէ
խնդրեց, որ Յիսուսի մարմինը
իրեն յանձնէ, թաղելու համար:



Պիղատոս նախ շատ զարմացաւ, որ Յիսուս այդքան շուտ մեռաւ:
Բայց երբ ստուգեց, թէ Յիսուս իրապէս մեռած է, Յովսէփին արտօնեց
Անոր մարմինը առնել եւ թաղել:

Յովսէփ գնաց ճերմակ մաքուր կտաւ, խունկ եւ զմուռս գնեց:
Լուր տուաւ Յիսուսի մօրը եւ անոր ազգականներուն, որ միասին
երթան եւ թաղեն Յիսուսը: Իջեցուցին Յիսուսը խաչէն, մարմինը
լուացին, օծեցին անուշահոտ իւղերով եւ մաքուր կտաւի մէջ
փաթեթելով դրին նոր փորուած գերեզմանի մէջ, ուր տակաւին մարդ

չէր թաղուած: Մուտքին ալ մեծ քար մը դրին ու փակեցին գերեզմանը:

Իսկ հրեաները, վախնալով Յիսուսի խօսքերէն թէ Ինք թաղուելէ երեք օր յետոյ յարուլթիւն պիտի առնէ, չորս զինուորներ պահակ դրին գերեզմանին շուրջ, որպէսզի չըլլայ թէ աշակերտները գան եւ գիշերով Յիսուսի մարմինը գողնան:

Յիսուս Քրիստոս այնքա՛ն սիրեց մարդիկը, որ յոժար կամքով մեղաւոր մարդոց փրկութեան համար չարչարուեցաւ եւ խաչուեցաւ, որպէսզի բոլոր անոնք, որ Իրեն հաւատան դժոխքի մէջ չկորսուին, այլ փրկուին եւ յաւիտենական կեանք ունենան:

Յիսուս Քրիստոս նաեւ մեզի տուաւ ամենամեծ պատուիրանը, որ սիրենք զիրար եւ գիտնանք ներել մարդոց, ինչպէս որ Ինք ներեց զԻնք խաչը հանողներուն:


Հարցումներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:

- 1.– Ո՞վ Պիղատոսէն Յիսուսի մարմինը ուզեց: Ինչո՞ւ:
- 2.– Յովսէփ Յիսուսը թաղելու համար ի՞նչ գնեց:
- 3.– Յիսուսը խաչէն իջեցնելէ ետք ինչ՞ ըրին:
- 4.– Ո՞ւր թաղուեցաւ Յիսուս: Գերեզմանի մուտքին ի՞նչ դրին:

5.- Հրեաներ ինչո՞ւ պահակ դրին գերեզմանին վրայ:

6.- Յիսուս քրիստոս ինչո՞ւ չարչարուեցաւ եւ խաչը հանուեցաւ:

7.- Ո՞րն է Յիսուսի տուած ամենամեծ պատուիրանը:



ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի թաղումը տեղի ունեցաւ Ուրբաթ օր: Երկու օր ետք, Կիրակի առաւօտ կանուխ, խումբ մը բարեպաշտ կիներ, իրենց հետ խունկ եւ անուշահոտ իւղեր առնելով գացին գերեզման Յիսուսի մարմինը օծելու: Երբ հասան գերեզման, գարմանքով տեսան, որ քարը վերցուած էր իսկ պահակները փախած էին: Մօտենալով՝



գերեզմանին մէջ նայեցան ու գերեզմանը պարապ գտնելով շատ գարմացան: Կարծեցին որ մէկը գիշերով եկած, ու վերցնելով



գերեզմանին քարը, իրենց Տիրոջ մարմինը գողցած էր: Կիներէն մէկը, Մարիամ Մագդաղենացին, գերեզմանին մօտ կեցած կու լար: Երբ ետեւ դարձաւ, պարտէզին

մէջ տեսաւ մէկը: Այդ մարդը...
Յիսուսն էր, բայց Մարիամ
չճանչցաւ զայն, կարծեց թէ
պարտիզպանն է, վազեց մօտը եւ
հարցուց. «Եթէ դուն վերցուցած
ես Յիսուսի մարմինը եւ ուրիշ



տեղ դրած, ըսէ՛ մեզի թէ ո՞ր դրիր, որպէսզի երթանք, առնենք»:

Անծանօթը պատասխանեց.

- Մարիամ՛:

- Ո՛հ, Տէ՛ր, դո՞ւն ես: Մարիամ անմիջապէս անդրադարձաւ, թէ
Յիսուսն է, ուզեց ոտքերուն փաթթուիլ, բայց Յիսուս արգիլեց ըսելով.
«Մի՛ մօտենար ինծի: Գնա՛, պատմէ՛ աշակերտներուս, թէ ես Գալիլիա
կ'երթամ: Հոն թող գան զիս տեսնելու»:

Մարիամ Մագդաղենացի ուրախութեամբ հեռացաւ գերեզմանէն,
եւ երթալով աւետեց աշակերտներուն, որ Յիսուս յարութիւն առած է:

Իր յարութեան յաջորդող քառասուն օրերուն, Յիսուս երեւցաւ
իր մօրը, իր աշակերտներուն եւ շատերուն: Ան պատուիրեց զիրար
սիրել եւ երկինք համբառնալէն առաջ, աշակերտներուն պատգամեց

ըսելով. «Գացէ՛ք, աշակերտ դարձուցէ՛ք բոլոր ազգերը, զանոնք մկրտեցէ՛ք Հօր, եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգիի անունով: Սորվեցուցէ՛ք անոնց պահել այն ամէնը, ինչ որ ձեզի պատուիրեցի: Եւ ահա ես ձեզի հետ պիտի ըլլամ մինչեւ աշխարհի վերջը»:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1.– Աւետարանական համապատասխան ընթերցուածները տեսնել Մատթէոս 28:1-15, Մարկոս 16:1-8, Ղուկաս 24:1-12, Յովհաննէս 20:1-18: Գործք Առաքելոց 1:1-12:

2.– Յիսուսի յարութիւնը չարին, մեղքին, սատանային ու մահուան դէմ տարուած բարիին յաղթանակն էր:

3.– Քրիստոնէայ եկեղեցիները Յիսուսի յարութիւնը կը տօնեն Չատիկին:

4.– Յիսուս պատմութեան ընթացքին երեւցաւ նաեւ բարի մարդոց: Ան միշտ կ'ըլլայ անոնց հետ, որոնք զինք կը սիրեն ու իր պատուիրանները կը գործադրեն:

5.– Յիսուս երբէք չբաժնուեցաւ աշխարհէն: Յիսուս միշտ մեզի հետ է իր Սուրբ Հոգիով: Նման այն հայրին, որ քաղաքէն եւ տունէն գործով կը բացակայի, բայց միշտ իր ընտանիքին հետ կ'ըլլայ միտքով եւ հոգիով:




Չարցունքներուն պատասխանէ՛ ամբողջական նախադասութիւններով:


- 1.– Կիները ե՞րբ գերեզման գացին եւ ինչո՞ւ:
- 2.– Ինչո՞ւ զարնացան կիները երբ գերեզման հասան:
- 3.– Կիները երբ պարապ գտան գերեզմանը, ի՞նչ կարծեցին:
- 4.– Մարիամ Մագդաղենացին երբ առանձին կու լար, ետեւ դառնալով որո՞ւ տեսաւ: Ծանչցա՞ւ զայն: Ո՞վ կարծեց:
- 5.– Մարիամ ի՞նչ հարցուց:
- 6.– Յիսուս Մարիամի ի՞նչ ըսաւ:
- 7.– Յիսուս իր յարութենէն ետք նաեւ որո՞նց երեւցաւ: Քանի՞ օր մնաց աշխարհի վրայ:
- 8.– Յիսուս երկինք համբառնալէն առաջ ի՞նչ պատգամեց իր աշակերտներուն:



«Մի՛ մօտենար ինձի: Գնա՛, պատմէ՛
աշակերտներուս, թէ ես Գալիլիա
կ'երթամ: Հոն թող գան զիս տեսնելու»
Յովհաննէս 20:17: .



«Եթէ դուն վերցուցած ես Յիսուսի մարմինը,
ըսէ՛ մեզի թէ ո՞ւր դրիր, որպէսզի երթանք,
առնենք» Յովհաննէս 20:15:



«Գացէ՛ք, աշակերտ
դարձուցէ՛ք բոլոր
ազգերը...

Սորվեցուցէ՛ք
անոնց պահել այն
ամէնը, ինչ որ ձեզի
պատուիրեցի:

Եւ ահա ես ձեզի հետ
պիտի ըլլամ մինչեւ
աշխարհի վերջը»

Մատթէոս 28:19:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴԱՍ 1	Ես Քրիստոնեայ Հայ Աշակերտ Եմ	էջ 2
ԴԱՍ 2	Հայ Քրիստոնեայ Աշակերտը Կ'աղօթէ	էջ 4
ԴԱՍ 3	Ամէնօրեայ Օգտակար Աղօթքներ	էջ 8
ԴԱՍ 4	Աստուածաշունչին մէջ կը Կարդանք	էջ 16
ԴԱՍ 5	Աստուած կը Ստեղծէ Եւա Կինը	էջ 27
ԴԱՍ 6	Փորձութիւնը	էջ 36
ԴԱՍ 7	Աստուած Մեզ կը Սիրէ	էջ 44
ԴԱՍ 8	Աստուծոյ Տուած Պարգեւները	էջ 48
ԴԱՍ 9	Աղամ Եւայի Սերունդները	էջ 53
ԴԱՍ 10	Նոյ Նահապետ	էջ 57
ԴԱՍ 11	Բաբելոնի Աշտարակի Շինութիւնը	էջ 62
ԴԱՍ 12	Հայր Աբրահամ	էջ 65
ԴԱՍ 13	Յիսուսի Աւետումը	էջ 73
ԴԱՍ 14	Յիսուսի Ծնունդը	էջ 78
ԴԱՍ 15	Յիսուսի Մանկութիւնը	էջ 86
ԴԱՍ 16	Յիսուս կը Սիրէ եւ Կ'օրհնէ Մանուկները	էջ 97
ԴԱՍ 17	Յիսուս Աշխարհի Լոյսը	էջ 102
ԴԱՍ 18	Յիսուս կը Հրաշագործէ Երիքովի Կոյրին Բժշկութիւնը	էջ 107
ԴԱՍ 19	Ոտնլուայ, Վերջին Ընթրիք եւ Ս-Հաղորդութիւն	էջ 111
ԴԱՍ 20	Գեթսեմանի Պարտէզին Մէջ Յիսուսի Զերբակալութիւնը	էջ 116
ԴԱՍ 21	Յիսուսի Զարչարանքները եւ Խաչելութիւնը	էջ 122
ԴԱՍ 22	Յիսուսի Թաղումը	էջ 128
ԴԱՍ 23	Յիսուսի Յարութիւնը	էջ 131